

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՆՉԱԿԵԱՆ ԽՈՅԱՆՔԸ

Հնչակեան Միութիւնը կատարուած իրողութիւն մըն է այլևս: Հնչակեան Միութիւնը ազգային մեծ, շքեղ ու միեմարար Իրողութիւնն է այսօր:

Կազմուիչ ու բարերար շունչի մը պէս, Միութեան Աւետիբ պայթեցաւ, սարքազուեցաւ ամէն կողմ, կապարի ծանրութիւններ փրցնելու անհեղձ Հայութեան ցաւազին սրաէն:

Հնչակեան անգրանիկ Քանակին զիրար վերադառած զինուորները՝ կարօտի սրտաշարժ թափով մը—զոր միևնոյն իսկալին համար միասին կուտան, միասին առաջադէմ ու յանկարծ, ձակառարկան օր մը, իրարմէ բաժնուած հոգիները միայն զիսկն—զրկելով իրանուէր ցան, արմուկ արմուկի իրենց կարգերը սեղմեցին, ու անգամ մըն ալ՝ ու առ յաւե՛տ՝ իրենց պաշտելի դրօշին վրայ՝ եղբայրական զինակցութեան անքակտելի ուխտը երգուընցան:

* * *

Ինչ որ սակայն, Հնչակեան Միութեան փառաւոր իրականացումէն՝ ամենէն աւելի ու ամենէն առաջ՝ յօտաւորէն զուրօ կը ցայտէ, կը հրապուրէ, կը յուզէ ու կը սրտապնդէ ու յոյս, կրակ ու հաւատք կը ներշնչէ ազգային Դատին, ազգային Յեղափոխութեան յազմանակին վրայ՝ սա էական, սա զերազանցօրէն շինիչ հանգամանքն է, թէ Հնչակեանները՝ հակառակ արժաւանքաւ թիւրիմացութիւններուն, հակառակ՝ սարիներու ընթացքին կուտակուած, հրահրուած ատելութիւններուն, հակառակ շահախնդիրներու և զսասլիքներու մթին ու յամառ օտնուրաններուն՝ դիպացան, բարոյական կորուստ ունեցան, Գործի՛ն սիրուե՛ն ու Գործի՛ն շնորհը, ամէն բան մոռնալու, անհատական ու կուտակական ամէն ճղճիմ նկատում արհամարհելու, անցեալին աւերը քանդելու, ու վճռապէս փշրելով բաժանումի սեւ շղթան, որ զիրենց անշուտեր էր այնքան ատեն, Հնչակեանները կարող եղան իրարու ձեռք պարզելու և միասին լծուելու վերօտին, միասին սկսուած նօսիրական ճիգին:

Ահա, ինչ որ տիրական նկարագիրը կը կազմէ Հնչակեան Միութեան, ահա՛ ի՛նչ որ պիտի չվերապահուի շուշաւ Հայ Ժողովուրդին ուշադրութեան:

* * *

Հնչակեան Միութիւնը կուգայ ուժգնօրէն ապագայ ցուցանել, թէ Հնչակեան կուտակութիւնը՝ հաւատարիմ ու արժանի իր կոչումին՝ փոթորիկներու, ազէտքներու և սապնապններու մէջէն՝ ջերմեամանգօրէն պահած է այն յեղափոխական վեհ անհղուցութիւնները, զորս իրեն կը տակաւն են Հայ Մաքառումին առաջին անմահ ուսն վերաները:

Հնչակեան Միութիւնը կը հասնի անգամ մըն ալ ապացուցանել այն լայն, աննախապաշար ու համարձակ օգին, այն բարձր ու անկաշկանդ հասակացութիւնը ու յեղափոխական այն խորունկ ու լուսաւոր զիտակցութիւնը, որոնք միայն կրցան Հայութեան արիւնէն ու հոգիէն բզկեցնել, ստեղծել Հնչակեան կուտակութիւնը, ապահովելով անոր անոպառ ու անընկճելի կենսականութիւն մը, որ զայն ընդունակ ըրաւ ինք իր մէջ խեղախօսէն վերանորոգուելու, առանց իր արիւնոտ հիմերը երբէք խախտել վտանգելու:

Հնչակեան Միութիւնը կ'ապացուցանէ զարձնալ, թէ Հնչակեան կուտակութիւնը ջերմեամանգ զիտակցութիւնն ունի այն ահաւոր պատմութեան ատելութիւններուն, զորս՝ իր փոթորկալից գոյութեան առաջին օրէն՝ ստանձնած է հանդէպ Հայրենիքին ու Հայ Յեղափոխութեան:

Հնչակեան Միութիւնը այն ազգային հոյակապ երևոյթն է, որ Հնչակեան կուտակութիւնը անգամ մըն ալ արիարար մարտնչացումը կը հանգրտանայ ամբողջ Հայ Ժողովուրդին կենսական պէտքերուն ու ազնուագոյն ձգտումներուն:

Հնչակեան Միութիւնը, վերջապէս, Հնչակեան նոր ու հզօր խօյանքն է զէպի իրականացումը ազգային գերադէմ տենջանքներուն, զէպի պտակումը Հայ ցեղին բոլոր ցաւատ ու արիւնոտ յոյսերուն, զէպի յաղթանակը դատարու է՛ն արդարին ու է՛ն եղբրականօրէն նուիրագոյն ծուածին...:

ՍԶԱՏ ԽՕՍԲԵՐ

ՀՈՅ ՀՈՐՈՒՍԵՐ

Այն խորթ ու աններգաշնակ ձայններն մէջ, գորս Չկամութեան մաղձոտ ուխտաւորներ կ'արձակեն երբեմն յեղափոխական ներկայ սրտապնդող Չարժնուծին շուրջը — զայն խանդարելու հոգեմէն, այլ ունայն ու ինքնաշարժար ճիզերով — հատ մը կայ, որ' համազումի սնրափորէն անհամող շեշտով մը կրկնուած՝ լողորներ և հաւանողներ կը թափազանել, ատենէ մը ի վեր, Յեղափոխութեան համակիր շրջանակներու մէջ իսկ:

— Հարուստներ պէտք են յեղափոխական Գործին զըլուխը, հարուստ վարիչներ... որպէսզի ժողովուրդը վստահութիւն ունենայ ու խղճի կատարեալ հանդարտութեամբ կատարէ իր ազգային պարտականութիւնը:

Ահա՛ թէ ինչ սքանչելի գիւտեր կ'ընեն կարգ մը նախախնամական գարմանատարներ, որոնք, յեղափոխական հարցերու մէջ, լուսնկայէն ինկածի միամիտ ու սրտաշարժ երեւոյթն ունին, որքան ալ անվիճելի ըլլայ իրենց ձեռքն հասութիւնը ուրիշ աօտել կամ նուազ «պատուաւոր» գործերու մէջ:

— Հարուստներ պէտք են յեղափոխական Գործին զըլուխը, հարուստ վարիչներ...

Բայց ինչ որ անմիջապէս ու անդիմադրելիօրէն զաւելջտական կ'ընծայէ այս պօշխօսքը՝ մեղադրող, ամբաստանող թոնն է, որով կ'ուզեն զայն յեղափոխական կուսակցութիւններուն կամ անոնց վարիչ մարմիններուն:

Անկարելի է երևակայել անպիտակացութեան ու այլանպակութեան աւելի սահմանող պարագայ մը: Ու մասածել, որ ոտիպուած ըլլանք նախ և առաջ կանգ առնել ասանկ հսկայ անհեթեթութեան մը սօջե ու հարցնել անոր զմայլելի հեղինակներուն:

— Ե՛րբ, ո՞ր հայ հարուստը եկած է երբէք յեղափոխական կուսակցութեան մը զուրը գարնել ու մերժուած և յեղափոխականներէն: Ե՛րբ, ո՞ր հայ հարուստին յեղափոխական գործունէութիւնը (.) չէզոքացնել, արգիլել, կաշկանդել փորձած են երբէք յեղափոխական վարիչները: Ե՛րբ, ո՞ր հայ հարուստը տրամադրութիւն ցոյց տուած է երբէք յեղափոխական Գործին ժտեմնալու և ո՞ր յեղափոխական գործիչն է որ չէ զիտցած ու փութացած օգտուիլ այդ տրամադրութենէն: Յեղափոխական կուսակցութիւնները և իրենց ընտրած, իրենց վստահած վարիչները ինչով են մեղաւոր, եթէ հայ հարուստները, ո՛ր և է ասան, ո՛ր է և կերպով, չեն յօժարալ, չեն մղուած Յեղափոխական Ճիզին մասնակցելու, անոր սատարելու:

Ինչպէս կարելի է՝ առանց ծիծաղելի ու անիրաւ ըլլալու՝ ամենպիտի չափով իսկ մեղադրել յեղափոխական կուսակցութիւն մը կամ զայն ներկայացնող վարիչները՝ այն ակներև ու պատմական ճշմարտութեան համար, որ Հայ Հարուստը զմեղակ անտարբերութեամբ մը վերաբերուեցաւ ազգային Գատին, կոնակ զարձուց Յեղափոխական Ետմուծին ու յամառեցաւ, քաւացաւ իր վայրագ սնկարտած անարութեան մէջ:

Հայ Հարուստը երբէք չի կրցաւ իր նիւթական օժանդակութիւնը ինքնաբերաբար բերել Հայ Յեղափոխութեան, այն ջերմեռանդ փութկոտութեամբ, որ՝ սարքակական զարբու ընթացքին՝ մղեր էր զինքը եկեղեցիներ կատուցանելու ու անոնց խնկուող պատերուն վրայ իր անունին ծախու առ ուսած փառքը յաւերժացնելու: Ամենամանչան բացառութեամբ, անպարզ ու ճարահատ Յեղափոխականին անողոք դաշոյնն էր, որ կրցաւ, ճգնաժամային րօպէներու, Հայ Հարուստը բանապատել ալպանական, ընդվզեցուցիչ զոհողութիւններու:

Բայց աւելին կայ:

Հայ հարուստները այն աստիճան անընդունակ են քաղաքացիական առաքինութիւններու՝ որ նոյն իսկ իրենց դաւանիլ յաւակնած սկզբունքներուն (.) պաշտպանութեանն ու բրօքականտին համար՝ անկարող եղան ու են տակաւին իրենց իրենց մէջ միանալու, կազմակերպուելու, ամրանալու: Հակայեղափոխական ձղուած իսկ որ այնքան մտտիկ ու ցանկալի եղած է միշտ իրենց սրտին՝ գեո չի կրցաւ ու չպիտի կրնայ գտնել երբէք՝ հայ հարուստներուն մէջ, կամ անոնց հովանիին տակ՝ Քանդուի ու Մատնութեան պիղծ գործին համար՝ իր կազմակերպուած ու գործօն սխոյեանները: — Որովհետեւ Հայ Հարուստը, ամէն բանէ առաջ, անկարող ու անընդունակ է ո՛ր և է հանրային, բարոյական ու բարձրօրէն այլասիրական նպատակի համար՝ նոյնիսկ իր նախընտրած, փառաբանած ուղղութեան մէջ՝ ո՛ր և է զօհողութիւն յանձն անելու: Հայ Հարուստին քաղաքացիական առաքինութիւնները՝ եկեղեցի շինելու, հիւանդանոց պահելու, մարտցկանի սղորմելու եւ ուրիշ զուտ ունեւորական պարտաւորութեանց ու պաշտօնական, ուսմիկ ու կարճատես գթութեան մը սահմաններէն անդին չեն կրցած երբէք խիզախել:

Յանցանքը յեղափոխականներունը չէ՛ ուրեմն, եթէ, ազգային փրկութեան նուիրական Գործին շուրջը, չը տրուեցաւ իրենց զգալ եղբայրական արմկահարուժը իրենց ունեւոր հայրենակիցներուն: Եւ ասիկա կրնա՞ր ուրիշ կերպ ըլլալ: Գարաւոր ստրկութեան այլասերող միջնորտին մէջ, Եկեղեցիին ներողամիտ ու մեղսակից շուրջին տակ, Գործին տարամբժ հաւատքով ու պաշտամունքով անամնացալ՝ Հայ Հարուստը կրնա՞ր՝ առանց փոխանցումի, բարեխղճութի՛ զուցէ անհրաժեշտ շրջան մը բոլորելու՝ մէկ օրէն միւսը, մերկանալ յան:

կարծ անցեալին հոգեկան բովանդակ ժանդոտ ու կեղ-
տոտ ժառանգութենէն ու օրուն սզգային իտէալին
գիտակցական ըմբռնման հասնիլ ու անոր հարկադրած
պարտաւորութիւններուն պատրաստ ու արամպիր զբա-
նուիլ: Պարագ ժամանակ ունեցու ընկերաբաններուն
կը ձգենք լուսաբանելայ կէտը: Մեր ըրածը պարզ հա-
տատու մըն է, որուն վրայ աւելորդ ու անտեղի կը սե-
պենք ծանրանալ:

* * *

Հայ Յեղափոխութեան կարգերէն հայ հարուստնե-
րու բացակայութեան բուն ու անվիճելի պատճառը մատ-
նանիչ ընելէ վերջ, կ'անցնինք այն հիմնապէս անիմաստ
ու տխուր առարկութեան, որուն կոթնած՝ Գրամին առ-
ջեւ, անոր գաղափարէն իսկ գունձափուռ ծառայի հո-
գիներ անհրաժեշտ կը գտնեն հարուստներու ներկայու-
թիւնը յեղափոխական կուսակցութիւններու ղեկին վրայ:

Հարկ իսկ չի կայ յամենայն ալ պատկառելի հա-
տարակ տեղիքին վրայ, թէ դրամը ուղիղ չի համեմատիր
յաճախ խելքին, ձեռնհասութեան ու անձնութիւններու
հետ, թէ յեղափոխական Գործը բոլորովին նոյն ընդու-
նակութիւններն ու յատկութիւնները չի պահանջեր, ինչ
ընդունակութիւններ ու յատկութիւններ որ կը պահանջէ,
օրինակի համար, վաճառականական տան մը, կամ
պանքայի մը վարչութիւնը: Մարդ վաշխառու կը ծնի,
կամ յեղափոխական, բայց ո՛չ, վաշխառու, նպարավաճառ
ու յեղափոխական վարիչ միանգամայն: Խնդիրը հոտ չէ
սակայն: Յեղափոխական Գործին զուլիւր հարուստ
վարիչներ տեսնելու տենչանքէն գալբարուդները «վտա-
հութեան» խօսք ընել կը համարձակին:

Վտահութիւն չունին եղեր, յեղափոխականները
վտահութեան արժանի չեն եղեր, հարուստներ
պէտք է եղեր գնել յեղափոխական կուսակցութիւննե-
րուն զուլիւր, որպէս զի ժողովուրդին վտահութիւն ներ-
շընչեն ու դրամը վազէ, յորդի Յեղափոխութեան գան-
ձարաններուն մէջ, եայլն, եւայլն:

Պէտք է նախի նկատի ունենալ, որ այսպէս ըսողներէն
չատերը, ոչինչ ունեցած են և ոչինչ ունին վտահելիք
յեղափոխական կուսակցութեանց վարիչներուն, որովհետև
ոչինչ զոհած՝ ու նուազ քան ոչինչ զոհելու տրամադիր
են՝ իրենց ետական ախորժակներուն զոհացումէն ու ի-
րենց թանկագին կաշիքն խնամքէն զուրօ՝ ո՛ր և է բանի:

Իսկ ժողովուրդը, որուն կողմէ խօսիլ — ու ո՛րքան
համոզուով — կը յաւակնին, երբէք չի թուիր բաժնել ի-
րեն վերագրուած այդ կասկածոտութիւնը, Յեղափո-
խութեան հանդէպ իր պահած մթորինակ դիրքովը: Ան-
շուշտ, ո՛չ օք կրնայ աւելի իրազեկ կերպով հաստատել,
ստուգել այս կէտը, որքան յեղափոխական կուսակ-
ցութեանց վարիչները: Հայ ժողովուրդը, իր ստուար
մեծամասնութեանը մէջ, միևնոյն անգիտակից ու կոյր

վերաբերմունքն ունի այսօր յեղափոխական Ճիգին նը-
կատմամբ, ինչ վերաբերմունք որ ունեցաւ երէկ, երբ զեռ
արատաւհամար զայն չէր օժտած ինքնակոչ ախոյեան-
ներու զարմանալի ու անակնկալ արջառովը, երբ զեռ
չէին մտարերած իր պարզ, բիրտ ու անկեղծ անուար-
բերութիւնը զարդարել, մեկնաբանել «անվտահութեան»
և այլ աւելորդ, անհարկի ու բռնագրօթիկ առարկութիւն-
ներով:

Յեղափոխական ժողովուրդը սակայն, ա՛յն, որ կ'ապրի
ու կը շարժի, ա՛յն, որուն համար եւ որուն շնորհիւ
ազգային իտէալ մը և անոր կապակերպուած հետա-
պընդուր զոյութիւն ունի, ա՛յն, որ իրապէս ու դրապէս
Ազգը կը ներկայացնէ, յեղափոխական արի ու անվեհեր
Թանակը, որուն կարգերը հետզհետէ կ'երկարին, կը
զօրանան, նորանոր խանդավառ յարուստներով, ո՛չ միայն
իր դրամը, այլ իր կեանքն ու արիւնը, իր ու Հայրե-
նիքին ճակատադիրը կը շարունակէ վտահելի իր ընտրած,
իր հետեւած վարիչներուն:

Բայց ենթադրենք, պահ մը, թէ հարուստներ անց-
նին յեղափոխական Գործին զուլիւր, տեսնենք ո՛ր աս-
տիճան ամուր ու ապահովիչ է երաշխաւորութիւնը, զոր՝
իրենց հաստ փորորուն հետ՝ պիտի կրնան բերել անոնք,
փարատելու համար «անվտահութեան» երեսակայական
խտովը Հայ ժողովուրդին սրտէն:

Չենք կրնար երեւակայել բան մը, աւելի ծառայա-
կանօրէն ապուշ, քան այն նախապաշարուած, որով ո՛-
մանք կը կարծեն թէ դրամը ամէն առաքինութիւն կ'են-
թաղրէ՝ զայն ունեցողին, անոր տիրացողին քով: Մարդ-
կային բարոյականի այսօրինակ ըմբռնում մը շարդա-
րանար, չի դիմանար սակայն իրականութեան առօրեայ
փաստերուն առջեւ:

Այդ սորուկ ու պոսնիկ բարոյականը պիտի մղէր
եզրակացնել ուրեմն, թէ ո՛ր և է հարուստ մը աւելի պար-
կեշտ, աւելի խղճամիտ, և հետեւաբար աւելի վտա-
հելի պիտի ըլլար, հանրային գործերու մէջ, քան անձ-
նուէր այլ անժառանգ յեղափոխականը:

Այդպէս չըօր սակայն կենդանի իրականութիւնը:
Մենք չպիտի յամենայն ապացուցանելու, թէ է՛ն մէծ ու
է՛ն պժգալի անբարոյականութիւնը՝ հանրային փրկութեան
Գործին նկատմամբ՝ Հայ Հարուստին ամթալի, անկիւնա-
քարչ մեկուսացումը կը կազմէ: Մենք պիտի բաւակա-
նանանք ապացուցանելով միայն որ՝ նոյնիսկ այդ գոհելիկ,
այդ անարգ բարոյականին տեսակէտէն զիտելով ու զա-
տելով՝ հարուստները անհունօրէն աւելի անվտահելի
զուրս եկած են հանրային գործերէն, անհունօրէն ա-
ւելի անխղճամիտ ու անպարկեշտ հանդիսացած են,
քան երբէք կարելի եղած ըլլայ վերադրել, ո՛ր և է ատեն,
ո՛ր և է յեղափոխական գործիչի:

Մէկ քանի յեղափոխական վարիչներու վերագրուած,
ու առուել կամ նուազ անխօսաւորանելի նկատուած

րով չափազանցուած զեղծումի առասպելները կրնան
 երբէք հաւատարիլ, բաղդատութեան իոկ դրուել յայն հօկայ
 գողութիւններուն, զեղծութեանն ու իւրացութեանն հետ
 զորս գործած են հայ հարուստներ — Թաղականներու,
 հոգաբարձուներու, խնամակալներու և պէս պէս մինձ
 աղաներու «ազգասէր», «եկեղեցասէր», «բարեպաշտ»
 ու բանկալակեաց սերունդներ: Քանի՛ն՛ր, այսօրուան
 Գոլտոյ հայ ազնուաշուք հարուստներէն, իրենց բազզը
 շինած, իրենց յայտնի ու աներևոյթ շառաւիղները սուս
 տեղ ըրած են ազգին տուններէն ու գործերէն կապտած,
 կողոպտած իրենց գողօններովը:

Յեղափոխականները վստահելի չեն... հապա հա-
 րուստները:

Չէ՛, «անվտանգութեան» պատրուակը զբարանու-
 թիւն մըն է լոկ, ու հարուստներու գեռ անձանօթ յե-
 դափոխականութենէն ակնկալուած դարձանը՝ անխառն
 ու միաժիտ ինքնախաբէութիւն մը:



Առկից չի հեանելի օակայն, որ հարուստներու գոր-
 ծակցութիւնը անխորժ ու անտանելի պիտի գար հայ
 յեղափոխականներուն: Ընդհակառակը: Գեղեցիկ ու յու-
 սազրիչ նորութիւն մը պիտի ըլլար՝ եւ ուրախութեամբ,
 խանդավառութեամբ պիտի ողջունուէր ատիկա, եթէ
 ինքնօրէն բարար, անկեղծօրէն ու եղբայրաբար, հարուստ-
 ները գային խառնուել յեղափոխական կարգերուն:

Յեղափոխական կուսակցութիւնները չեն անշուշտ,
 որ չէզոք ու անտարբեր հարուստներուն պիտի զիմէին՝
 իրենց դրամը վստահելու համար անոնց: Ամօթ պիտի
 ըլլար, որ հազարաւոր յեղափոխականներ չկրնային զըւ-
 նել, իրենց շարքերուն մէջ, խումբ մը անհաստներ, ամէն
 վստահութեան արժանի: Յեղափոխական Գործին մահը
 պիտի ըլլար ատ, ու բարեբաղդաբար ատանկ վտանգի
 մը նշոյլն իոկ չօպահանար մեր Հայրենիքին:

Հարուստներուն կ'իյնայ մօտենալ յեղափոխական
 կուսակցութիւններուն, մանկ անոնց մէջ ու՛ եթէ պէտք
 կայ՝ աւելցնել անոնց վարկը, իրենց անպարտաճանաչ
 ու քարօրտ բաղդակիցներուն ու ծառաներուն աչքին:

Եւ յեղափոխական կուսակցութիւնները չեն, որ եր-
 բէք մերժած են, կամ պիտի մերժէին հարուստներու
 գործակցութիւնը, անոնց ներկայութիւնը իրենց վարիչ
 շարքերուն մէջ, — պայմանաւ որ հարուստները ընդունին,
 ճանչնան, խոստովանին իրենց յեղափոխականութիւնը,
 պայմանաւ որ չեզափոխականանան ուզեն ըլլալ եւ ըլլան
 գործնականօրէն:

Այլապէս Յեղափոխութիւնը օտարֆներու, շէրչիներու
 կամ մենձ աղաներու հովանաւորութեանը պէտք չունի:
 Ու «անվտանգութեան» անիմաստ առարկութիւնը՝ սն-
 հունօրէն կրկնուած՝ չպիտի կրնար երբէք մազի շափ

չեղել զիրենք իրենց հպարտ ու արժանաւոր զիրքէն
 ու հարկադրել զիրենք անպատուաբեր ու աղէտաւոր զի-
 շուսներու:

Հնչակեան կուսակցութիւնը չէ՛ անշուշտ, որ պիտի
 ինքզինքն անպատուէր՝ «անվտանգութեան» պատրուա-
 կին առջեւ վրդովուած՝ հարուստներու դուր պաօտա-
 նելով: Հայ Յեղափոխութեան մէջ դասակարգային խըւ-
 րութիւններ չենք ճանչնար, բայց չենք ալ կրնար հան-
 դուրմել, որ յեղափոխական բարոյականը կասկածի տակ
 գրուի, չենք կրնար հանդուրժել, որ յեղափոխական
 Գործին մէջ, պարկեշտութեան ու պարտաճանաչութեան
 քրիզերիւմը, այսինչին կամ այսինչին ոսկիներուն քա-
 նակը կազմէ:

Մենք խորապէս համոզուած ենք, թէ հայ յեղափո-
 խականները, «անվտանգութեան» պատրուակին հաւա-
 նելով ու համակերպելով, է՛ն մեծ նախատինքն ըրած
 պիտի ըլլային ինքնիրենց, է՛ն մեծ նախատինքնը՝ ի-
 րենց է՛ն արի, է՛ն անձնուրաց, է՛ն զիւցազնական եղ-
 բայրներուն, որոնք, իրենց յեղափոխական գործունէու-
 թեան ընթացքին, ամէն զրկանքի ու ամէն տառապան-
 քի ախայ օեղմած՝ քալած են մինչեւ վերջը, ու յաճախ
 Հայ Հարուստին վիթխարի եօականութեան երկաթէ
 պատին զարնուած, անկից արգիլուած, անոր վրա՛
 շախշախուած՝ ինկած են Գահիճին ձեռքը...:

ԱՍՊՍՏԱԿՆԵՐԸ



ՄԻՆԱՅ ՕՂԼՈՒ

ԻՍ.

ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ՆԱԻԱԿԱՏԻՔԸ

Չարշավայի կառավարական շէնքը յանկարծ զը-
 ղըրդաց: Մոյլ ոստիկաններ, որոնք իրենց ղօվուչներուն
 մէջ օրուան շահաաակութիւններուն վրայ կը շատա-
 խօսէին, թուղթ, տամա, թավլու կը խաղային եւ կամ
 արեւելեան յանկերգներու միօրինակ թմբուցութիւնը կ'ե-
 ղանակէին, ամենքն ալ դուրս նետուեցան: Գիտիային
 իրարանցում մը փրթաւ: Բուռն ակնկալութիւններով

ցնցուած՝ ոստիկանները, առանց իրենց պետերուն հր-
բամանին սպառելու, այս ու այն կողմ կը վազէին խե-
լագարօրէն, որը՝ Պին Պաշին, որը՝ Փայմազամին, որը՝
Քեաթիպի մը կամ պաշտօնեայի մը լուր տալու:

Անակնկալ աւետիտ մըն էր Մինաս Օղլուի սպան-
նութեան լուրը իրենց համար: Եւ ահա, ժամ մը շան-
ցած, կառավարական բոլոր պաշտօնեանները՝ Փայմա-
զամէն մինչեւ յետին Քեաթիպը՝ Սերայ վազեցին: Առջի
բերան շիրնալով, շհամարձակելով հաւտալ լրաբեր
ոստիկաններուն՝ ներս կանչել տուին լազ երիտասարդը
եւ սիսան, իւրաքանչիւրն իր կարգին, առանձին հար-
ցուփորձել զայն:

Սէյտին, կարծես բոլորովին սպաւնով ըլլար Լեզմանի
եւ Կիւչիկ Հասանի վերջնական յաղթանակին՝ վստահօ-
րէն պատմեց անոնց կախին մանրամասնութիւնները,
հատուցուց թէ ինքն անձամբ ահանաւես եղած էր
արիւնահեղ ընդհարումին եւ Մինասի գնդակահար իյնալը
իւր աչքերովը տեսած, եւ անոր քանի մը ընկերներուն
կիտամեռ կամ վիրաւոր տապալակիլը նկարագրեց զունագեղ
բացատրութիւններով:

Ուրախութիւնը չղթայագերծ ներս խուժեց Սերայէն:
Խենդեցած էին բոլոր պաշտօնեանները: Իրար կը շնոր-
հատուէին, իրար կը համարուէին, եւ շատերը, իրենց լի-
առատ սեղանին զիւն նոր ելած՝ կուշտուէալ փորով
ու զուլնին քօնեակի շողին գեռ մտալով խելայեղօրէն կը
պոռչտային, կօկորզին կը պատուէին, հրամաններ կ'ար-
ձակէին ալ ուձախ, ու ոստիկաններ ճամբայ կը հանէին,
կը վազցնէին Լոզմանի ու Կիւչիկ Հասանի զիւցաղնական
յաղթութեան աւետիտը հասցնելու համար աղալի մը,
բաշայի տիպոսով օննքացող արիւնբերան թիւրքի մը,
կամ անօթի բէկի մը:

— Տավուլ զուռնա բերէ՛ք, հրամայեց Փայմազամը,
որ հին աւազակ չերքէզ մըն էր իր շահատակութիւններովը
ու քաջագործութիւններովը մեծ համբաւ հանած:

— Բժիշկ հարկաւօր է, հարցուց Միւստաի Ումուլմին:

— Ո՛չ, պատասխանեց Պին Պաշին, աւելի լաւ կ'ըլլայ,
որ բոլորն ալ մինչեւ քաղաք քաշկոտել տաք, ողջ թա-
ցողներն ալ ձամբան թող ստակին:

Վերջալոյսին, թիւրք պաշտօնեաններէ բաղկացած
խումբ մը ձիաւոր քաղաքէն գուրս ելան օրաբշաւ ու՝
ղէպի հարաւ՝ Գուրչունլուի հայ գիւղերն առաջնորդող
ձամբէն սկսան յառաջանալ:

Հեռուն, արեւմուտքէն, Չագալլըի լեռնաշղթային
գագաթներուն վրայ, կը տեսնուէր մարը մանող արեւը,
որ ծիրանի մպիտ մը կ'արձակէր ձիաւորներուն: Հորի-
զօնը շրջապատող թեթև ամպերը կարծես վերը սպան-
նուած երկու աւազակներուն արիւնովը ներկուած ըլ-
լային:

Երբ Չախմախ գիւղը հասան՝ արդէն արեւը մարը
մտած՝ եւ անլուօթին զիչիբի մը թանձր խաւարը ծանրանալ

սկսած էր տափարակին վրայ: Չագալները, իրենց Յա-
քըսօցներէն գուրս ելած, ամէն կողմէն անընդհատ կ'ու-
լուէին: Ելիլ Լըմազի երկու ափերուն վրայ տարածուող
եղէգնուտներէն կը լուրեր կիսնէրու անվերջ ու սարս-
առազեցիկ հոնդիւնը: Ու հետեւէն, գեռ շքադուած եգիպ-
տացօրենի ու բրինձի արաբերուն մէջէն, կը հնչէր թի-
թեղէ թմբուկներու շարունակական, խլացուցիչ աղմուկը,
արջերն ու կինճերը վախցնելով՝ զանոնք արաբէն հե-
տու կեցնելու միջոց մը, զոր այդ կողմի գեղացիները հնա-
րած են, իրենց հունձքը՝ վայրի գազաններուն գէժ՝
պաշտպանելու համար:

Գիշերուան ժամը երկուրէն առանները, պաշտօնական
կարաւանը Ռուլու Փունարէն Բեթթէն Կէտիշի տանող ցից
դատիվներն կը բարձրանար: Հայ գիւղացիները, բարձ-
րաստիճան պաշտօնեաներու եւ հեծեալ ոստիկաններու
ստուար խումբի մը յեղակարծ ու անակնկալ ներկայու-
թեանէն ուրստափահար, արտատովօր գէպքի մը գոյութիւնը
կը զուշակէին:

Ոստիկանները տունէ տուն կը վազէին, լեռնային
օահնակներ պատրաստել տալու՝ հայ քաշերու գիակ-
ներուն, այդ անձատշիլի գագաթներէն վար փոխադրու-
թեանը համար: Գիւղացիները, որոնք կախին ելըը տար,
տամօրէն հասկցած էին արդէն, ապշած, օահնակած՝ թող
կուտային օր ոստիկանները իրենց ուզածն ընեն: Ո՛չ
մէկը ընդդիմանալու, նոյնիսկ խօսելու տրամադրութիւն
ցոյց կուտար: Կը զգուշանային վայրկեանական ուրա-
խութեամբ խենդեցած թիւրք պաշտօնեաներու զինու-
թութեան վրայ պաղ շուր թափել:

Կոռի վայրը հասնելու հազիւ կէս ժամուան տեղ
ձացեր էր: Բլուրի մը գագաթն էին, եւ Էյրի Քիրազը, իր
անտաններով, անոնց առջեւ կը տարածուէր: Դամբանա-
կան անշարժութիւն մը կը տիրէր հոտ: Կենդանութեան
ոչ մէկ նշան: Վայրի անձեղները, իրենց ցունէն օթափած,
սկօեր էին քնացող տնտանները աղմկել:

Լոզմանը չէր երեար օակայն: Անոր խումբին մար-
դոցմէն գունէ մէկը չէր զրուած այդ կողմերը, կառավարու-
թեան ներկայացուցիչները յաղթութեան վայրն առաջ-
նորդելու համար: Բարեզուշակ նշան մը չէր տօրկա: Ու
վրդովիչ նախազգացումները կ'աւելնային հեռզհեռէ:
Բուրի մը տիւր վայրէն կը լուրեր երբեմնափի, նա-
խապաշարուած թիւրք պաշտօնեաներու ներսիցին խուլ
անձկութիւն մը ձգելով:

— Սէյտին կանչեցէ՛ք, Սէյտին, թո՛ղ ան մեզի առաջ-
նորդէ, հրամայեց էր Փայմազամը:

Ամէն կողմ Սէյտին փնտտեցին, ու քիչ առանէն յայա-
նուեցաւ որ լազ երիտասարդը երևան չիկար: Մինչեւ
Ուլու Փունար անոր իրենց ընկերանալը տեսեր՝ բայց
հօտ իր հետքը կորոնցուցեր էին: Աներևութացեր էր:

Սէյտին՝ գիւղը հասնելուն, իր ուղեկիցներէն պահ
մը հեռացեր օւ մութին մէջ պատահամբ կանգ առեր

էր գիւղական տան մը բակին ծօռ, այն միջոցին իսկ, երբ ոտականները գուտնէ գուտ ինկած սահակներ պատ-
 բառտելու վրայ էին: Սէյտին ախանջին տարօրինակ
 փոփոցներ հասան: Հետաքրքրութեամբ մտիկ ըրաւ
 առանց բառ մը փակցնելու: Լողմանի և Կիւլիկ Հա-
 սանի մահուան պարագաներուն վրայ կը խօսէին ներքո:
 Սէյտին համոզուեցաւ ահաւոր իրականութեանը: Երկար
 ատեն հայերու մօտ աշխատած ըլլալով՝ անոնց լեզուն
 սորվեր էր ու գիտեր թէ անոնք իրար չէին խարեր առանկ
 ծանրակշիռ հանգամանքներու մէջ: Սէյտին համար
 խնդիրը բոլորովին փոխուեր էր օակայն հիմայ: Մինասի
 ու անոր ընկերներուն մահուան աւետիսը վազցուցեր,
 նետեր էր ամէն կողմ, պաշտօնի մը հասնելու տենջան-
 քէն ու ականալութենէն խելայեղած: Հիմա իր մեռած
 հօշակած հայ կարիճները վերականգանացեր էին ու անոնց
 ոտքերուն առջև փռուած կը տեսնէր իր երկու ամբար-
 տաւան պետերուն գիակները: Ի՞նչ պատասխան ախտի
 տար, երբ Գայմագամը ու անոր հետ բոլոր պաշտօն-
 եաները իրմէ հաշիւ պահանջէին իր ոտու լուրին հա-
 մար՝ որ զիրենց այնքան իրարանցումի ու տակնուվրա-
 յութեան մատնած էր:

Լողմանի և Կիւլիկ Հասանի չարաչար պարտու-
 թիւնը խորապէս վրդովեց Սէյտին հոգին, ու Մինաս
 Օղուն, իր ընկերներով, մեծցաւ, աստուածացաւ անոր
 մօքին մէջ: Մանուրին խօսքերը յիշեց ու ատելու
 թնկ աւելի հիացական ու ջերմեանդ զգացում մը սկսաւ
 ծայր տալ իր ներօրհին: Մինասը տեսնելու թաքուն
 այլ բուսն ու հմայիչ տենջանքն ունեցաւ անգիտակցա-
 բար, ու այդ վայրկեանէն իսկ միտքը դրաւ, ուխտեց
 ինքզինքին գայն գտնել, անոր թեւերուն տակ գինու-
 բազրուիլ: Մինասը ա՛լ իրեն համար աղտոտ կեանքուրը
 չէր, ինչպէս զինքը խարեր, նախապաշարեր էին: Լողմանի
 և Կիւլիկ Հասանի արիւնը գայն ու անոր ընկերները
 լուացեր, մաքրագործեր, սրբագործեր էր, ու անոնց զի-
 նակից ըլլալը իր կեանքին էն մեծ պատիւը պիտի սեպեր
 հիմա Սէյտին: — Օգուտ քաղելով օտտիկաններու իրար-
 անցումէն եւ տիրող թանձր խաւարէն՝ իր ձիուն զուլը
 ետ գարձուց, Թէքէ Գիւղին ճամբան ձեռք առաւ
 ու գիշերին մէջ աներևութացաւ:

Սէյտին յանկարծական անհետացումը թէև ճնշող
 օպաւորութիւն մը թողուց պաշտօնեաներուն վրայ,
 բայց անոնք դեռ չէին ուզեր յոռետես ըլլալ, ձախոր-
 դութեան, աղէտքներու վրայ խորհիլ: Լողմանն ու Կիւ-
 շիկ Հասանը կրնային Գափու Գաեայի ճամբով՝ Չար-
 շամպա գացած ըլլալ, կրնային մօտակայ գիւղի մը մէջ՝
 իրենց զոհերուն արիւնովը գինովցած՝ վայրագ ու օան-
 ձակաօր խրախճանքի մը անձնատուր եղած ըլլալ:
 Հաւանական էր ալ, որ Սէյտին ետ թացած ըլլար
 նուագածուններու խումբի մը հետ, զոր՝ իրենց խելայեղ
 վազքին մէջ՝ Չախմախ թողած էին, քանի մը ոտական

ներով, համաց կամաց գայն: Համար:

Գիշերուան ժամը երեքն էր, երբ Գայմագամը, բոլոր
 պաշտօնեաներով Ուստա Մակարի տունը տեղադրուե-
 ցաւ: Աղալար թիւրք գիւղէն մարդիկ կանչեցին կոտին
 մանրամասնութիւնները իմանալու համար: Անոնք ալ
 իրենցմէ աւելի բան մը չէին գիտեր: Ոչ Լողմանը տեսած
 էին և ոչ ալ Մինասը: Միակ բանը զոր կրնային ըոն
 վստահաբար՝ կոտի՝ տեղի ունենալն էր ան: Ելքը իրենց
 բոլորովին անձանթ էր: Ոչ ոք համարձակօ՛ւ էր Մա-
 րագին մօտենալ:

Հրամայեցին տանտէր Ուստա Մակարը բերել: Ան-
 կարելի եղաւ գայն գտնել. վաղուց անհետացեր էր ան:
 Յուսախաբութեան նախնական նշանները սկսան երեւիլ
 պաշտօնեաներուն զէմքին վրայ, բայց անոնք չէին ուզեր
 իրենց ներքին խռովքը մատնել եւ տակաւին յոյսի կտոր
 մը ամէն գնով կը յամառէին պահել: Վայրկեանէ վայր-
 կեան Լողմանին ներս մտնելուն կրօնասէին ականջէ:

Ոտտիկաններ զրկեցին, որ երթան հայ քաջերուն զի-
 ականքը փնտռեն: Սակայն անոնք, քիչ հեռուն, անտա-
 ոին եզերքը կանգնած՝ կը տնտնային: Գիշերուան մութը
 զիրենց կը խռովէր և տեսակ մը վախով համակուած՝ դէպի
 անտառը քայլ առնելէ կը զգուշանային: Ամէն ծառի տակ
 հայ հայտուտի մը օտուերը կը կարծէին նշմարել եւ իրե-
 բու կասկածելի երևոյթը զիրենց դարձեալ երկնուան երկ-
 շոտ ու զանգաղ վարձկաններն էր դարձուցեր: Անոնք,
 այդ միջոցին, իրենց հոտած դօվուշին կարօտը կը քա-
 շէին: Ուրիշ ճար չիկար օակայն, պէտք էր առաջ երթալ:
 Քանի մը հասը իրարու ըով գալով երկար բարակ խօր-
 հրրգակցելէ վերջ՝ ներկայ գտնուող հայ երիտասարդ-
 ները առջեւին ձգած դէպի մարտդ սկսան երթալ:

— Աս ո՞ր սատանին ծակերուն մէջ շիներ էք ձեր
 մարագները, կ'ըսէին անոնք հայ երիտասարդներուն
 իրենց ահն ու զողը ծածկել ճգնելով, ցորեկ ատեն իսկ
 անկարելի է գտնել զանոնք մանաւանդ մեզի համար որ
 օտարականներ ենք:

Հայերը, որոնք անտառին մէջ քաշելու վարժ էին,
 խոշոր իւզոտ մարիներ վառելով ոտտիկաններն առաջ-
 նորդեցին: Մարագին մօտենալու համար անհրաժեշտ էր
 անցնիլ մեծ կնձնիին ըովէն՝ որուն ետին Կիւլիկ Հա-
 սան ամբանալով կռուած էր և որուն ոտքերուն տակ ե-
 բսի վրայ փռուած էր հիմա իր անշունչ ու կիռամերկ
 գիակը:

Ոտտիկաններէն մէկը, որ առջեւէն երթալու յանդըզ-
 նութիւնն էր ունեցեր, օտտուածով մը ետ կտակցեց, իր
 միտ ընկերներուն ձայն առաւ, եւ ամենքը մէկ՝ խոշոր
 բիրեր ձեռուրնին՝ յառաջ նետուեցան:

- Ահա՛ շանը մէկը...
- Խո՛ղը... սատկեր է...
- Չարիկէք, զարկէ՛ք...
- Հը... հը... հը...

— Փա՛թ... փա՛թ... փա՛թ...

Ու բիրերը կ'իջնային անընդհատ կիռչի կ' Հասանի գիակին վրայ։ Ոչ սք հետաքրքրուեր էր անգամ մը գիակին երեսը նայելու։ Անյաղթելի վախով մը պրկուած աւ զողահար կատաղութեամբ մը կը զարնէին ու կը զարնէին, լուսնոտ սողալուցներ արձակելով։ Իրենց աղմուկը գողահարի տը լեցուցեր էր, ու այդ տարօրինակ ձայներէն բոլոր պաշտօնեաները զուրո թափեր էին։ Դիակի մը գտնուիլը լսեր էին, ու ամենքը մէկ առաջ հասնելու աննզէն բռնուած՝ իրար կը հրմշտկէին, կը կոխկոտէին։ Կեանքը ձեռնուր անհամարութիւնը զանոնք խենդեցուցեր էր, ու հասնողը հարուած մը երկուք, երեք, կ'իջեցնէր արդէն ջախջախուած, տափ սկսած գիակին։

— Մինչեւ սենեակ քաշկոտեցէք զայն, հրամայեց Գայմագամը, իր բիրը վերջին անգամ իջեցնելով։

— Տարածատեննիդ քարերուն ու փուշերուն զարկէք, փրփրաց Պին Պաշին զայրոյթէ մոլեգնած։

Քիչ մը հեռուէն ուստիկաններու ձայներ հասան իրենց յանկարծ։

— Հատ մըն ալ... հատ մըն ալ...

Ամենքը զեպի հոն խուժեցին նոր ու աւելի հաստ բերեր վերցուցած։

— Ե՛րան շանորդի...

— Անհատաւ կեանքուր...

— Աղտոտ խոզ...

— Տուէ՛ք սօփան...

— Թա՛մ... Թա՛մ... Թա՛մ...

— Թա՛ր... Թա՛ր... Թա՛ր...

Բիրերը կ'իջնէին ու կ'իջնէին, ու պաշտօնեաները՝ վայրաց վատութեամբ մը լեցուած՝ գիակներու վրայ կը համարձակէին փորձել իրենց հերոսութիւնը։

— Չուա՛րի կտոր մը չի կա՛յ, ոսնաց Պին Պաշին։

— Սա կեանքներուն գօտիները քակեցէ՛ք, հրամայեց Գայմագամը։

Հայ երիտասարդները, որոնք հլու համակերպութեամբ մը, այդ ամբողջ կատակերպութեան ելքին կըս պատէին, թող տուին որ ոստիկանները իրենց գօտիները քակեն։

— Կապեցէ՛ք սա շան լէշերուն ոտքերէն, պոռաց Գայմագամը անհամբեր։

— Թո՛ղ կեանքները քաշկոտեն իրենց սատակած հերոսները, մէջ մտաւ Պին Պաշին։

Իրենց տրուած հրամանին հնազանդ՝ հայ երիտասարդները սկսան զեպի Ուստա Մակարի տունը քաշկոտել երկու գիակները։ Մարտերու լոյսին տակ կարելի էր տեսնել մոլեգնած պաշտօնեաներու այլանդակ թափորը։

Ուստա Մակարի տան առջեւ ելզնուած աղբի զեզե-

րուն վրայ նետել տուին գիակները, ու սրտերին պաղշտկած, վրէժնի կշտացուցած՝ ներս խուժեցին, փրերնին ալ կշտացնելու։

— Տառ քսան հատ Թարմ վտակ մորթել աւա՛ք, հրամայեց Գայմագամը։

— Պի՛նձ մը պղուր փիլաւ։

— Քանի մը շիշ օդի։

Այն պէս ձայն մը կուգար։ Ամենքն ալ՝ իրենց ախորժակին համեմատ կերակուրներ կ'սպասարէին, ու կարճ միջոցի մը մէջ գիւղական համեստ սեղանը քաղքենի ճուճ մտելիքներով բռնուարուած էր։

Ամենքն ալ կը կոնծէին լիաբերան, ու թրքական շարքիներու անվերջ շղթայազերծումովը, գիւղական գիշերը կը փոթարկէին։

— Ասանկ առիթ քսան տարին անգամ մը չի ներկայանար, կ'ըսէր Պին Պաշին, ու Լոզմանի և կիռչիւկ Հասանի կենացը կը խմէր որոնք իր հիւ ոստիկաններու քաջութիւնն էին ունեցեր։

Կէս գիշերը արդէն յօտեցած էր, երբ եփուած կերակուրները՝ իրարու ետեւ՝ սեղանին վրայ շարուեցան։

Գայլի ախորժակով սկսան լախել ա՛նքն ալ։

— Եթէ այսպէս առէ, այսօր հոս մնալու պիտի հարկադրուինք, ըսաւ Միւտտաի Ումուժին, վառելի մը զիսար, հինգ մատներով բերանը թխել աշխատելով։

— Յաւտեան կը մնանք, եթէ ասանկ-սեղաններու շուրջը պիտի բոլորուինք, միջամտեց Միւսթանթըրը։

— Կերակուրը լմնալէն անմիջապէս վերջ պէտք է մեկնինք, շեշտեց Գայմագամը։

— Այդ երկու կեանքներուն լէշերը՝ մուծնուլուսէն առաջ՝ քաղաքին հրապարակին վրայ պէտք է նետուին մօրէ մերկ, աշխարհին օրինակ ըլլալու համար, յարեց Պին Պաշին։

Ժամ մը վերջը կերակուրը լմնացած էր ու սեղանին մնացորդը դուրս դրկած էին ոստիկաններուն, և Ուստա Մակարի տունը սիկարէթի ծուխով լեցուած էր։

— Վերի վերոյ տեղեկագիր մը կրնանք պատրաստել, յիշեցուց Միւտտաի Ումուժին։

— Օրինական ըլլալու համար այդ բանը քիչ թէ շատ հարկաւոր է, մէջ մտաւ Միւսթանթըրը։

Քանի մը ոստիկաններ, որոնք վերջացուցեր էին կրծել իրենց ձգուած ոստիկանները ու գոան մօտ կեցած՝ պաշտօնեաներու խօսակցութիւնը մտիկ կ'ընէին, կարծեցին թէ գիակները մերկացնելու հրաման կար, վազեցին ու իր քաջաշիւրը բանի մը տիրանալու յոյսով՝ սկսան գիակները կողուպտել։

— Հո՛ս սե՛յ, հրաման երաւ ներսէն։

Երկու հայ երիտասարդներ ներս քաշկոտեցին գիակները ու գօն ըով՝ տախտակամածին վրայ ձգելով զանոնք, դուրս ելան։

Սենեակը պէտք եղածէն աւելի լուսաւորուած էր, ու իւրոտ մարտերու կոճերը տան կեզրոնը գտնուող վա. ոարանին մէջ իրարու վրայ զարուած ճարճատելով հրե. ղէն լեզուներ կը բարձրացնէին:

—Քանի՜ տեղէ զարուեր են, հարցուց Պին Պաշին՝ Միւտտաի Ումուսին դասնալով՝ որ հիմա ուշադրութեամբ պիտկներ կը զննէր:

Միւտտաի Ումուսին պատասխան չտուաւ, անոր դէմքը յանկարծ կարմրեցաւ, կապուտցաւ, յետոյ դեմ գեղին կարեցաւ, ու պազ ջրտինքի խոշոր կաթիլներ անոր նակաէն վար թափել սկսան:

—Կ'երեի՜ քու սիրտդ մոմէ շինուած է, պոսաց Պին Պաշին, կարծելով թէ Միւտտաի Ումուսին կը նուազի:

—Կեամբորի լէշերու առջեւ տկարանալը ամօ՛թ է, ամօ՛թ, կրկնեցին պաշտօնեաներէն մէկ քանին:

Միւտտաի Ումուսին օակայն լուռ ձեաց, ինքզինքը բռնեց, կրկին ու կրկին վար ծոցցու, քնից, ջրտինքաւ, ու վերջապէս հազիւ լսելի ձայնով մը հեւաց:

—Աստուած իմ, այս մարդիկը թլփատուած են, ու ետ ետ գէպի պատը ընկրկեցաւ:

—Ի՛նչ... Ի՛նչ... գոչեցին պաշտօնեաներն ամէն կողմէ, զօպանակէ մը մղուածի պէս իրենց օտուրներուն վրայ անկուած:

—Թլփատուած, կրկնեց Միւտտաի Ումուսին:

Իւրաքանչիւրը վառ մարտի մը կտոր ձեռքին՝ առաջ վազեց, անձամբ հաստատելու և սուղեկու տննչով: Ան. հաւատարի բռն մըն էր առ: Աւ հեռզհեռ օտուրը սկսաւ ամենուն գէմքին վրայ ախրել: Աւ եղերա—կա. տակերգական տարօրինակ տեսարան մը եղաւ առիկա: Յաջորդաբար մերկ մարմիններուն թլփատուած մասերը փութացին քննել անոնց իրարու ետեւ, ու քարացած, ընկճուած ձեացին ահաւոր հաստատումին առջեւ:

—Երեսներն ալ քննե՛նք, երեսներն ալ, տեսներն քով կրնան ըլլալ:

Պին Պաշին, որ այդ անակնկալէն շանթահարուեր ձեացեր էր, դէպի դիակները վազեց ու անոնց անկեր. պարուն գէմքերը ուշադրութեամբ քննել վերջ կիսամեծի նման՝ իր մօտ գտնուող պաշտօնեաներէն մէկուն կոթնե. ցաւ ու նուաղկատ ձայնով մը քանիցս կրկնեց:

—Լողման... Կիւչիւկ Հասան... Լողման... Կիւ. չիւկ Հասան...

Ամենքը՝ ապուշ կտրած՝ իրարու կը նայէին: Պահ մը առաջուան խրախճանքէ մոլեգնած, կարմրած գէմքերը զալկացեր էին: Սարօտքը կը կարգացուէր անոնց վրայ:

—Ու մենք ասոնց դիակներն անարգեցինք, մըր. մընջեց Քայմագամը, տխուր շեշտով մը:

—Կեամբորներուն քաշկոտել տալով, հասաչեց Պին Պաշին:

—Չգետա բերէ՛ք, անկողիններ գրէ՛ք օահնակներուն վրայ ու հոն պատկեցուցէ՛ք այս նահատակները, հրամա.

նեց Քայմագամը:

Անհանդիստ էին հիմա ամենքն ալ: Ամբողջ անտառը հայ առպատակներով լեցուն էր կարծես: Աղալարի գիւ. ղացիները իրենց տուններն էին փախեր: Ո՛չ պաշ. տօնեաները, ո՛չ ալ ոտտիկանները կը համարձակէին Մինասի անունը ալ: Անոր գնդակին հոտը կը զգային, անոր հակայական շնչատութիւնը լսել կը կարծէին, անոր աչքերուն փայլատակելը կը տեսնային գիշերուան խաւա. րին մէջ: Ու ժամ մը վայրկեան մը առաջ փախչելու, ա. զատելու ճարը կը փնտռէին հիմա:

Իրենց այդ ահու գոգին մէջ շքուած՝ կը օրսփային անոնք, երբ հեռուէն, տալու զուանայի առաջնորդու. թեամբ, մարագին մօտեցան խուճ մը ոտտիկաններ: Ա. նոնց միացած էին շատ մը թիւրք գիւղացիներ, ու ամենքը մէկ՝ ուրախութեամբ գինոյցած՝ կը ցատկատէին և հա. յուշներով անտառը կ'աղմկէին:

Նուագարաններու լեղակարծ աղմուկը այդ վայրի բարձրավանդակին վրայ փրթած՝ աւելի ահու գոգի մատ. նեց թիւրք պաշտօնեաները, կարծես հրաւէր մը ըլլար ան հայ առպատակներուն՝ հատնիլ ու տեղն ի տեղ տա. կեցնել ամենքը: Քայմագամը՝ սարօտփէն կատաղած հրամայեց որ լռեցնեն:

Ոչ ոք կը համարձակէր օակայն գոնէն քալ մը աւելի առաջ երթալ: Տեղերնին գամուած կը ձեային: Անտառին բոլոր ծառերը հոգի առեր, կը շարժէին մութին մէջ, ու կարծես մէյ մէկ առպատակ զարձած՝ գէպի Ուստա Մակարի բնակարանը կը խօսէին:

Վերջապէս քանի մը հայ երիտասարդներ զրկուեցան պաշտօնեաներու հրամանը հաղորդելու: Հայե, ուն խօս. քին ականջ կախող շեղաւ, ու ոտտիկանները՝ խօշկան պար մը բռնած՝ տան բակը մտան: Քայմագամը ձեռքին մէջ վառած մարխ մը բռնած գուրս վազեց ու կատաղու. թենէն սկսաւ օանալ:


—Է՛շ թիւրքեր, աւանակներ, լոնցէ՛ք, լոնցէ՛ք...

Հոն գտնուող ստորադաս պաշտօնեաները անոնց մօ. տեցան ու եղելութիւնը անսնց ականջին փսփոացին:

Ամենքն ալ սահմակած, սարօտփած՝ օմքեցան մը. նացին:

Ժամ մը շանցած, Ուրախութեան հանդէսը Սուգի թափորի մըն էր փոխուած, որ հայ երիտասարդներու թիկ. նապահութեան տակ, գէպի վար, գաշաը կ'իջնէր մօտա. կայ թիւրք գիւղի մը մէջ տեղաւորելու, և անկից առաուն Չարշամպա տանելու համար Լողմանի և Կիւչիւկ Հա. օանի ճղակտոր դիակները:

(Շարունակելի)



ԹԻՒՐԲԵՐԸ

սսսսսսսսս

Երիտասարդ Թիւրքեր՝ սրոնք Հայկական ահաւոր կոտորածներէն վերջ Եւրոպա նետուած են՝ զէպի Հայերը մերձեցուցի սրտցաւ տրամագրութիւններ ունենալ կը թուին երբեմն, և հաւաքական գործակցութեան մը անհրաժեշտութիւնը կը քարոզեն յաճախ կը խօսին մեր տառապանքներուն վրայ, զգուանք կը յայտնեն սուլթանի գահիճներուն զէմ և համակրանքի խօսքեր կ'ընեն Հայ ժողովուրդին նկատմամբ: Բուռն ճիգեր կը թափեն, մասնաւորապէս, ապացուցանելու համար, թէ Հայ աշխարհը ճղակտոր դարձնող ահռելի աղէտներուն միակ պատասխանատու հեղինակը նոյնինքն գահակալ ոճրագործն է, որ ուղղակի, պաշտէն, օպանագին կը հրամայէ իր բոլոր կուսակալներուն, պաշտօնեաներուն, կրօնաւորներուն՝ թունդ հանել Թիւրք ամբօխի մոլեռանդութիւնը եւ արծարծել իսլամական սխակալութիւնը ընդէմ քրիստոնեայ տարրերուն ու մանաւանդ ընդդէմ Հայերուն:

Երիտասարդ Թիւրքերուն համար միւսլիման ժողովուրդը անգիտակից, կոյր ու գիւրաթեք զօրծիք մըն է միայն հայերուն վրայ կատարուած բոլոր քստմեղի եղենագործութիւններուն մէջ:

Ու այսպէսով տաճիկ ազատականները կ'ուզեն եզրակացնել, թէ Հայերը անիրաւ եւն ո՛ր եւ է հակառակութիւն սնուցանել զէպի թիւրք խուժանը սրուն տնտեսական ու քաղաքական վիճակը, իբր թէ, աւելի տաժանելի, աւելի ողբալի է քան սուլթան Համիտի կատարութեան դարչելի լուծին տակ ապրող ո՛ր եւ է քրիստոնեայ ցեղի կացութիւնը:

Ու գտնուեցան ինքզինքնին նոյնպէս ազատական ու բուռն Հայրենասէր անուանող տաճիկներ ալ որոնք աջ ու ձախ ձայն բարձրացուցին, զժողովութիւն իսկ յայտնեցին, թէ Հայ յեղափոխականները ամենաոխերիմ առեւտրութիւն կը զրգոնեն զէպի Թիւրք ցեղը, ու ատանկով անուղղակի պատճառ կը դառնան միւսլիման ձեռքերով կատարուած սարսափելի աղէտներուն...:

Օ՛, միամիտ ու միանգամայն զգուելի ամբաստանութիւնը, որուն քօղին տակ ի զուր ժածկել պարտկել կ'աշխատին այն մոլեռանդ, հայատեաց ու դիւային զրգուռները, զոր մոլեղնօրէն կա'րծարծէին փաթթոցաւոր իմաստներէն սկսած մինչեւ գատրները, դոնապաններէն սկսած մինչեւ բարձրագոյն պաշտօնատարները ու ասոնց հետ՝ ամբողջ տաճկաստանի քաղաքներուն և դիւղերուն առաջաւորները, սրոնք ազգեցութիւն մը ունին ազիտութեան ու բարբարոսութեան մէջ պահուած իրենց տիւր հաւատակիցներուն վրայ:

Ամբողջ տաճիկ ժողովուրդը՝ երբ թալլելու, բռնաբարելու, կոտորելու զազանային տենջաւքով մը մեղօսակիցը դարձաւ իր արիւնոուշտ վեհապետին, չգտնուեցաւ տաճիկ ազատականի գո'նէ աննշան խմբակ մը, որ յայտնի կամ ծածուկ կազմակերպութեամբ մը՝ քանդուծի ու հրդեհի այդ զժոխային օրերուն մէջ՝ վրդովուծի նշան մը ցոյց տար, և Հայաստանութեան շնչին ապացոյց մը ընծայեր՝ հակազդել փորձելով մեր ցեղին զէմ քարոզուած յայտնի համարձակ թշնամութիւնները, սրոնք միակ հրէշային նպատակի մը կը ձգտէին — մեր բնաջնջումը առաջ տանիլ արագ և միշտ անպատիժ միջոցներով:

Անգամ մը որ ազատ հողի վրայ ոտք կը դնեն, քնցուչ զգացումներ կ'արտայայտեն մէկէն, ու օրտաբուխ հրաւերներ կը կարգան Հայերուն ու մասնաւորապէս Հայ յեղափոխականներուն՝ երթալ միանալու համար տաճիկ ազատականներուն, զարգացած, յառաջադէմ օսմանցիներուն հետ, որոնք կը փափաքին տապալել իրենց ներկայ բռնապետական կառավարութիւնը:

Միանալ, ու մէկ գրօշակի տակ ահեղօրէն կոուիլ հասարակաց թշնամիին, օգտտափառ դահճապետին զէմ, եւ վերակազմել ամբողջ Թիւրքիան:

Ու շատ բան կը խստտանան մեզի, — Սահմանագրութիւն, արգարութեան ըէմիմ, ամէն բան, եթէ կ'ուզէք:

Ու ո՛րքան ալ բարի են: Հայկական հարցը յիշու հիմերու վրայ հաստատուած՝ և այդ պատճառով իսկ ամենածանր արգելքներու մատնուած կը գտնեն, ու կ'առաջարկեն մեզ օթափիլ վերջապէս, քիչ մը աւելի գործնական միտք ունենալ, աւելի լայն հողի վրայ զընել խնդիրը և ընդհանուր բարենորոգումներու մէջ փնտաել ամէն զոհացում՝ միանգամ ընդ միշտ մտնալով Տաճկաստանի քրիստոնեայ ցեղերուն ինքնուրոյն վարչութիւնը, զոր Ռուսիա՝ 1878 օգոստոս 7ին, եւրօպական արքունիքներուն ուղղած իր բողոքագրին մէջ միակ գրաւականը կը նկատէր Թիւրքիոյ խաղաղ գոյութեան:

Իրողութիւն է օսկայն որ Հայ յեղափոխականները ո՛չ միայն ուղղակի թիւրք ժողովուրդին զէմ առեւտրութիւն քարոզած չեն, այլ ընդհակառակը՝ զործնականապէս մէկէ աւելի լուրջ փորձեր կատարած են տաճիկ հասարակութեան մէջ մտնելու և հայոց հետ անոր յարաբերութիւնները շարունակ բարեկամական վիճակի մը մէջ պահելու հաստատ մտադրութեամբ:

Հնչակեան կուսակցութիւնը մանաւանդ՝ ժամանակին մասնաւոր ճիգեր թափած է սուլթանի անարգ բռնապետութեանը տակ իրենց հօգին քաջկուտող բոլոր ցեղերու յեղափոխական տարրերուն մէջ ընդհանուր գործակցութիւն մը հաստատելու:

Կրնանք բացարձակապէս ըսել, թէ Հայերը՝ նոյն իսկ պէտք եղածէն աւելի վստահութեամբ ու խանդա-

վառութեամբ ուղտ ըն մօտենալ թիւրջ հայրենասէր-
ներուն, որոնց անունը միայն Պյաճ էինք և որոնք
գործնական ապացոյց մը չի տուին տակաւին, թէ
պատրաստ են վճռական կոխը մղելու՝ իրենց հայրե-
նիքի ճշմարիտ վերակենդանութեանը համար:

Գոթաղգաբար, այս մասին, հայերուն ի գործ դրած
բոլոր ջանքերը ապարդիւն թացին: Եւ իսլամական
վայրագ մոլեռանդութիւնը ա՛լ աւելի սաստկացաւ՝ յօշո-
տելու, ջնջելու համար հայ ցեղը, որ անտանելի լուծի
մը տակ կը տանջուի, որ իր բոլոր իրաւունքներուն խո-
րունկ գիտակցութիւնն ունի և իր արիւնը կը թափէ՝
իրեն ուղեգիծ ունենալով ազգային ազատութեան գա-
ղափարը:



Վերջերս կրկին հրապարակի վրայ աղմուկ հանն
կ'աշխատին նոր ազատականներ: Այս անգամ գործին
նախաձեռնութիւնն ստանձնած է նոր խումբ մը, որուն
մէջ կարեոր գեր մը կատարելու ետանդ մը ցոյց տալ
կը թուին Տաճատ Մահմուտ բաշայի երկու որդիները:

Ընդհանուր կոչին մէջ՝ զոր իրենց Գօնկրէէն առաջ
հրապարակ նետեցին, ասոնք ալ խոստովանած են, թէ
օսմանեան կայտութեան բոլոր հպատակները, անխափր,
կը տառապին այսօր:

Սուլթան Մէճիթի թոճները ինքզինքնին երջանիկ
կրգան հպարտօրէն յայտարարելով, թէ տաճիկներուն
մէջ ալ կը գտնուին մարդիկ, որոնք չեն ուզեր վատ
անտարբերութեան մը անձնատուր՝ կուրօրէն, ստրկօրէն
հպատակիլ, եւ թէ՛ ընդհակառակը, «թիւրքիան ունի
ազատութեան պաշտպաններ, որոնք է՛ն մեծ անձնուի-
րութիւնը ցոյց կուտան և ամէն ճիգ կը թափեն թոթ-
ուելու խայտառակ բանութեան մը լուծը:»

Բայց օ՛րն է այդ անձնուիրութիւնը, ի՛նչ գործով
հաստատուած է ան: Իրաւ է, թէ Մարմարայի յառակը
բազմաթիւ իսլամ ուսանողներու պազ զիակներ նետուած
են վայրենաբար, հեռուօր աքօտրափայրեր զրկուած
բաւական թուով տաճիկ գատապարտեալներ կան ան-
շուշտ, և Պոլսոյ բանտերուն մէջ իսկ Երիտասարդ
թիւրքեր կը գտնուին զեղնած, զունատած և առաւելը-
կամ նուազ ծանր տանջանքներու ենթարկուած: Բայց
ասոնք ամենքը լոկ կսօկածի մը գոհերն են և կամ
շատ շատ «Մէշվէրէթ» կարգացած ըլլալու իրենց ոճիւրը
կը քաւեն:

Ապտամբական կոխին մէջ, կուրծքէն զարնուելով,
հերոսաբար, ղենքը ձեռքը, հայրենիքի հողին վրայ ին-
կած տաճիկի մը անունը չենք իմացած տակաւին:
Մընչդեռ բաւական կարեւոր թիւ մը կը ներկայացնեն
անոնք, որ արտասահմանի մէջ քանի մը յանդուգն
խօսքեր արտասանելէ վերջ, պզտիկ ամօթոշակի մը
ապահովութեանն առջեւ ամէն մտածուածի դաւաճանած՝

ու սիրայօժար բանութեան ոտքը նետուած են: Իշխան
Սապահէտտին և Լուիթֆուլլահ «խրոխտաբար» յայտա-
բարած են, թէ իրենք չեն պատկանիր «այն դասա-
կարգի մարդոց, որոնք վտանգին առջեւ կընկրկին կը
ձեան»:

«Մենք՝ անգամ մըն ալ կը կրկնենք, — ըսած են
իրենց միեւնոյն ընդհանուր կոչին վերջը, եւ մեր պատուոյն
վրայ կը յայտարարենք, թէ ո՛ր եւ է զոհողութեան
առջեւ չպիտի կասինք Գործին համար, որուն նախրած
ենք ինքզինքնիս»:

Բայց ի՛նչ կ'ուզեն ընել: Ահաւասիկ իրենց պա-
տասխանը. — «Այսօր այս կողը կ'ուղղենք մեր սիրելի
հայրենակիցներուն, թիւրքերուն, ալպանացիներուն, հա-
յերուն, մակեդոնացիներուն, սիրիացիներուն, ցիւրտե-
րուն, հրեաներուն: Եւ մեր նպատակն է համաձայ-
նութիւն մը գոյացնել՝ բոլոր ազատականներուն ուժերը
միացնելու համար: Անգամ մը որ այս համաձայնութիւնը
հաստատուի, մենք պիտի յաջողինք սանձ մը գնել
իւժարութեանց և հատուտել կառավարութիւն մը, որ
ամբողջովին պիտի համապատասխանէ մեր արդի պա-
հանջութեանը:»

Գիւրին յաղթանակ:

Ու այդ փրկարար կառավարութեան արժանանալու
համար միակ դրաւական միջոցը կը նկատեն Միա-
հաթի սահմանադրութիւնը, ուր սուլթանը հոշակուած է
զերպոյն պետ մը, ազատ ու քաջարձակապէս աւելպա-
տասխանատու իր բոլոր արարքներուն համար:

Երիտասարդ թիւրքերը ի՛նչպէս կրնան մօտնալ
արդեօք 1878 մարտ 19 թուականը, ուր թիւրքիան ալ
իր խորհրդարանն ունեցաւ:

Միտհաթ բաշայի կուտակցութիւնը, այո՛, յաջողե-
ցաւ իր ծրագիրը գործադրել, բայց Ապտիւլ Համիտ
այդ բարեկարգութիւնները ոչնչացուց, և խղճալի խոր-
հրդարանը՝ քանի մը ամսուան անուանական գոյութենէն
յետոյ՝ լուծուեցաւ բոլորովին:

Ընդունինք վայրկեան մը, թէ Ապտիւլ Համիտի
քեռորդիները Բարիզէն պիտի յաջողին վերահաստա-
տել Միտհաթի սահմանադրութիւնը: Ի՛նչ պիտի ը-
նեն, ու ի՛նչ պիտի կրնան ընել սակայն եթէ օրուան
անպատասխանատու սուլթանը անգամ մըն ալ տապալէ
խորհրդարանը, աջօրէ բոլոր բարենօրոգիչները ու մէկիկ
մէկիկ կախազան բարձրացնէ անոնց արբանեակները:
Նոյն սահմանադրութիւնը չէ՛ որ սանձարձակ խալի-
ֆային ամէն իրաւունք կուտայ կապելու և արձակելու:

Բայց մեր նիւթէն գուրօ է հոս ծանրանալ այդ
սահմանադրութեան հիմնական կէտերուն վրայ:

Մեր մտահոգութեան եւ ուշադրութեան առարկան
առայժմ երիտասարդ թիւրքերու հետապնդած կառա-
վարական նոր բեժիմը չէ այնչափ, որչափ այն պաղարիւն
հոգածութիւնը, որով մէկ կողմէն հայկական գատնի

բարեացակամութիւն մը կը ձեւացնեն ու միւս կողմէն կ'առաջարկեն մեզ ուրանալ մեր ազգային ուրոյն գոյութեան արգար ու անձեռնմխելի իրաւունքը:

Հայկական ինքնավարութեան մը գաղափարն անգամ կը զրգոէ յանկարծ իրենց մոլեռանդ, ծայրայեղ ու կոպիտ աններողութիւնը, որովհետեւ իրենց բո՛ւն և միակ նպատակն է անուանական սահմանադրութեան մը առերևոյթ հրապոյրներով հայ ազգը շարունակ իրենց ուզած ձեւով կաշկանդած պահել, օրէնքներ, կամայականութիւններ հարկադրել, խեղդել անոր ձայնը, ու կամաց կամաց ոչնչացնել և կամ տաճկացնել զանի:

Ինչ պիտի ընեն օսմանեան խորհրդարանին մէջ սպրդած քանի մը հայ երեսփոխանները, եթէ հոն զրտնուզ տաճիկ ազգախականները «Չայն Բազմաց»ի սկզբունքով քուէարկեն մէկ օր մեր բոլոր դպրոցներէն վտարել մեր լեզուն, մեր պատմութիւնը և մեր ազգային ասանդութիւնները:— Լալով զուրօ պիտի փախչին լեհերուն նման: Ու ճիշդ այս ապահովութեամբն է որ օսմանցի ազատականներն իրենց սահմանադրութիւնը կը հրամցնեն մեզի:

Թիւրք ազատականները այժմէն անձնատուր եղած են «զօրաւոր»ներու քաղաքականութեան, որ կ'ուզէ տկար ցեղերու դոյութիւնը վերջնել: Երիտասարդ Թիւրքերն ալ չեն կրնար տակաւին ընդունիլ, թէ բոլոր ազգութիւնները ազատ ու ինքնիշխան պէտք է ըլլան, իրենց իրենց սեփական տէրը դառնալով: Սկզբունք մը՝ օրուն անունով դաշնակցեցան երբեմն Անգլիա, Աւստրիա, Ռուսիա և Բրուսիա՝ ընդդէմ Նաբօլէօնի:

Տաճիկները— մեր ըլլան կամ թէ երիտասարդ— աւելի բազմաթիւ և զինուորական բիրտ ուժի տեսակետով աւելի զօրաւոր՝ իրաւունք ունենալ կը կարծեն իրենցմէ տկարը իրենց մէջ ձուլելու, կորսնցնելու: Եւ իրենց այս նպատակը քաղաւորելու միամտութեամբ, արդարութեան և իրաւունքի անունով կ'երգօւրնան, ու յաճախ կը դիմեն այնպիսի տխուր փաստերու, որոնցմով ծիծաղելի կը դառնան պարզապէս:

Տամատ Մահմուտ բաշայի տղաքը հայկական ինքնավարութեան դադափարին հակառակ են բացարձակապէս. եւ այդ անիրաւ հակառակութեան մէջ իօկ, կ'ուզեն մեզ հատացնել, թէ իրենց հայասէր են եւ տկարին խնամակալները մնալ կը սիրեն:

Եւ ահա, թէ ինչպէս կ'արդարացնեն իրենց համատաճկական ձգտումները.

— «Ոմանք այն կարծիքն ունին, թէ Թիւրքիոյ գերիշխանութեան տակ տեղաւորուած զանազան տարրերը պէտք է աշխատին իրենց անկախութիւնը ձեռք բերել՝ առանց ուրիշ տիրապետութեան մը ներքեւ մնալու՝ ճիշդ պալքանեան փոքրիկ կառավարութեանց պէս: Մենք սակայն այն կարծիքէն ենք, թէ որչափ ատեն որ աշխարհիս մէջ գոյութիւն ունենայ «Սարկիլ

Փօր լայֆ»ը՝ ժողովուրդները բնագատուած պիտի ըլլան տեսական եւ յարաբերաբար աւելի բաւարար ուժ մը ձեռք բերել՝ ինքզինքնին պաշտպանելու եւ իրենց անկախութիւնը պահպանելու համար: Արդ՝ վայրկեան մը ընդունինք որ Թիւրքիոյ մէջ հաստատուած տարրերը յաջողեցան իրենց անկախութիւնը ձեռք բերել: Այն ատեն օտ ստոյգ կ'ըլլայ, թէ այդ տարրերուն զբաւած երկիրներուն ազգիւրները հազիւ պիտի բաւեն հօգալու բոլոր զինուորական ծախքերը, զորս անհրաժեշտօրէն ընել պիտի օտպուլին՝ արտաքին յարձակումներու դէմ պաշտպանուելու համար: Հետևապէս՝ իրենց համար աւելի նպատուար է համակերպել մեզ հետ ապրելու՝ իմաստուն և արդար կառավարութեամբ մը՝ զօր կը պահանջենք ամենքս միասին:»

Յուլթանի կառավարութիւնը՝ իբր ատուածպետական, միահեծան տէր մը՝ պաշտպանի ու զօրաւորի անողոք անունով կը շահագործէ, կը հարօտահարէ, կը կոտորէ, կը մորթէ մեզի: Ազատական տաճիկները՝ զարշիլի կեղծիքով մը՝ Արդարութեան և ազատութեան անունին տակ կ'ուզեն շարունակել տիրողի, հարժօտահարողի միևնոյն անհանգուրծելի բռնաւորութիւնը: Բերանին սահմանադրութեան նուիրուած է, բայց ուրտով ու մտքով կապուած են տաճիկ կայրութեան, տաճիկ տիրապետութեան, անոր կ'երկնցնեն իրենց ձեռքերը շարունակ, ու անգամ մը որ երկրին Տէրը դառնան՝ ալ իրենց կը մնայ գիտնալ, թէ ինչ կարծէ տաճիկ սահմանադրական ըլլալ...:

Իօկ մենք հայերս պէտք չունինք տաճիկ հողիին ծալքերը քրքրելու և անոնց քաղաքիւտած բայց հայաբաւեաց ու աղէտաւոր մտածումները հօտ ի վեր հանելու: Ո՛չ ալ կը հարցնենք իրենց, թէ ինչ միջոցներով կ'ուզեն ձեռք բերել իրենց «արդարութեան բէժով»ը: Բարիզի Գօնկրէն պէտք եղածէն աւելին պարզեց արդէն:

Մեր նպատակն է մատնանիչ ընել Թիւրքերու մէկ սխալ հասկացողութիւնը, որ ամենաթանձր նախապաշարումներու գերի կը պահէ զիրենք:



Ըօխք արդէն, թէ ո՞րն է Թիւրքերուն միակ նպատակը՝ մասնաւորապէս հայերուն և ընդհանրապէս հըպատակ քրիտոնեայ ցեղերուն նկատմամբ: Ու ճիշդ՝ ձուլումի այդ նպատակը ուշ կամ կ'անուխ, ամէն գնով, իրականացած տեսնելու աննշանքով է որ Գուրը թաթարական գոռօզութեան և անգլութեան հետ ընդունած է նաև պարագային համաձայն խոստումներով խաբել իր բարբարոսութեանց գէմ իրաւամբ բողոքող տարրերը:

Որքան խաթթը հիւսալուններ, որքան խաթթը շէրիֆներ անգործադրելի մնացած են: Նոյն իօկ հայերուն համար քանի բարենորոգման ծրագրերն են թուղթի վրայ

գրուած Ֆալէն անդին չեն կրցած անցնիլ: Քայց ամողով Կատուութիւնը կը վկայէ, թէ տաճկական բռնութեան սուրը կրնայ իր անբռնաբարելի իրաւունքներուն համար կոտորակ ազգի մը վերջնական ազատութիւնը ուշացնել, բայց ո՛չ երբէք զայն մեղցնել:

Տաճիկները այն կարծիքը ունին, թէ իրենց կայսրութիւնը մեծ հարուած կը ստանայ եթէ հայոց ինքնավարութիւն մը տրուի: Օսմանեան հարստութեան հզօրացումին զլխաւոր, ու թերեւ միակ, միջոցը՝ դժգոհ տարրերը համատաճկական ծրագրին հետ հաշտեցնելուն մէջ կը տեսնեն անոնք:

Ու հո՛տ է որ կը յիշուին շարաշար:

Ինչ ալ ըլլայ տաճիկ կառավարութեան ապագայ ղեկավար՝ միապետական կամ թէ սահմանադրական՝ երկրը ղեկի վերջնական անկում առաջնորդող ներքին խռովութիւնները, դժգոհութիւններն ու ապստամբութիւնները բնաւ չեն կրնար զաղրիլ, եթէ ցեղի մը զարեւոր իրաւունքները բռնաբարուած Ֆալ շարունակեն:

Թիւրքերը միանգամ ընդ միշտ պէտք է ըմբռնեն սաբաթաճակ ճշմարտութիւնը, թէ օսմանեան կառավարութիւնը՝ Հայոց պահանջումներուն զոհացում տալով՝ ո՛չ միայն ինք իր մէջ չի տկարանար, այլ ընդհակառակը՝ նոյն իսկ քաղաքական տեսակէտով ապահովագոյն առաւելութիւններ պիտի ունենայ:

19րդ դարը ազգերու ազատութեան սկզբունքը մարտնչութեամբ իրաւ է, թէ հզօրագոյն կոչուած պետութիւնները միշտ աշխատած են ու կ'աշխատին տկարները կլլել, լնցնել՝ և օսկայն անկարելի է իրերու բնական հոսանքին առաջն առնել: Քանի՛ քանի՛ ազգեր, որոնց գոյութիւնը 1814էն առաջ ճանչցուած անգամ չէր, տյօօր իրենց անկախութիւնը կը վայելեն: Եւ այդ ազատութիւնները ո՛չ միայն մէկ կողմէն ո՛ր եւ է կերպով, որ և է պետութեան փաստակար չի կրցան ըլլալ, այլ միւս կողմէն գործնական հզօր ազգակներ զարձան շատ մը արիւնահեղ ընդհարումներ արգիլելու: Այն պետութիւնները, որոնք ազգերու ազատութեան սկզբունքին կը դաւաճանեն, շարունակ ներքին աղէտաւոր խառնակութիւններու կ'ենթարկուին: Թիւրքիան իր քայքայումը փութացուցած պիտի ըլլայ, եթէ տակուին Հայոց ազգային ինքնուրոյն գոյութեան բաղձանքը խեղդել փորձելու իր շիլ քաղաքականութիւնը շարունակէ:

Ազգ մը ա՛յն ատեն պէտք չունենար զէնքի դիմելու և խաղաղութիւնը խանգարելու, երբ արդէն տիրացած է իր սեպհական անմխտելի իրաւունքներուն եւ երբ օտար մը իր արիւնը չքամեր այլ եւ վայրագօրէն:

Ազատական Թիւրքերը՝ Դրան երկրի մի, խարդախ քաղաքականութիւնը իւրացնելով և հայերը իրենց յաւիտենական որսը պահել ջանալով, ո՛չ միայն իրենց քարոզած Արդարութեան ղեմ ահաւորօրէն կը մեղան:

չեն, այլ նաև՝ նոյն իսկ զուտ հայրենասիրական տեսակէտով՝ անգիտակից մօլորում մը շարունակել՝ կը յամաօին:

Խաբուած, հարստահարուած, իր ցեղային իրաւունքներուն մէջ բռնաբարուած հայը բնականաբար չպիտի կրնայ երկար հանդուրժել, և իր անընդհատ կոխը պիտի վերսկօի աւելի զայրագին: Այսպէսով հայն ու Հայաստանը կոտածաղիկ մը պիտի Ֆան, որոնք միշտ բաց պիտի պահեն «Հիւանդ Մարդու բաժանումին ցանկացող պետութեանց միջամտութեան ճամբան»:

Իր ազատական բաղձանքին իրականացումը վաշխելով հայ ազգն է որ առիթ ու միջոց պիտի ունենայ կատարելագործելու, և իր բուն արժէքին համեմատ դիրք մը զբաւելու: Ու այն ատեն է, միայն այն ատեն, որ պիտի կրնայ իր քաղաքակրթութեամբ և իր ուժով մեծապէս նպաստել նաև Թիւրքիոյ յառաջդիմութեան և խաղաղութեան ապահովութեանը:

ԹԻՒՐԻՔԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՍԸ

Այն երկարաձգուող ու տևող ճգնաժամը, որ՝ տարիներէ ի վեր՝ Թիւրքիոյ կազմական գոյութիւնը կը յատկանշէ, այսօր նորէն մտած է իր քրոնիկ վատթարացման շրջաններէն մէկուն մէջ, որոնցմէ խեղճ Հիւանդ Մարդը ամէն անգամ զուրօ կուգայ աւելի ցնցուած, աւելի դունաթափ, ու յաճախ արգահատելիօրէն անդամահատուած:

Աս եղած է գրեթէ՝ վերջին քառօրյ զարու ընթացքին՝ Թիւրքիոյ պատմութիւնը: Եւ ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ արդէն: Ազգերը շարժող եւ շինող տիեզերական օրէնքներուն ապուշ ուրացումը, կառավարող շարքերուն մէջ ու անոնց զլուխը՝ անասնացած եսականութիւններու միահեծան տիրապետումը, երկկ, այսօր ու վաղը՝ Եսին պահպանումը միայն մտահոյ, դիրքի ու դասակարգի պատասխանատուութիւններէ զողահար մեկուսացումը, հանրային լրտեսուած խղճմտանքին ու լոնցուցուած բողօքներուն իօպտո մահացումը, ծախու հանուած հայրենիքին առջեւ, ո՛ր եւ է զոհարբութեան կարծես ցեղային անընդունակութիւնն ու իտէալի չգոյութիւնը, լքումը վաղուան հաւաքական ճակատագրին, անկումի դուռները բերած հասցուցած են Թիւրքիան և կարծես կորուստին անելներուն փակցուցած են զայն:

Այնչդի ու անխուսափելի օրէնքի մը հետեանքով, որ, օրէ օր աւելի նեղցող ու ծանրացող երկաթէ անուրի

մը պէս, իր խեղդող ճնշումին տակ կրօպանայ, երկրին անկումը ճակատագրային եղած է կարծես:

Յնտեսական պայմաններու արդի անդիմադրելի տիրապետումը, անակնկալ յեղաշրջումներու արդիւնքին ալ թերեհաւատ կ'ընէ մեզիս Ռոզվետեի օտար քաբիթալը համայնակույ Մոդոքի մը պէս, երկաթուղիի, ուժիի, հանքի ու պանքայի առանձնաշնորհումներու ձեւին տակ, իր արխնծծան լեզուները խոթած է անոր մարմնոյն:

Քաղաքական, տնտեսական, ցեղային ու բարոյական այն բոլոր ուժերը, որոնք թիրքիան կը շրջապատեն ու անոր գոյութիւնը կը պայմանաւորեն, աւելի պահանջկոտ ու աւելի անողոք կը ներկայանան այսօր: Խուլ անտարբերի ու կոյր հանդիսատեսի իր դիրքին մէջ անպատրաստ՝ թիրքիա, հարկադրուած, դատապարտուած է տեղի տալու իր բոլորախեղ աննօղ, զինքը նեղը դնող ուժերուն, որոնք հեազհետէ, թերևս անզգալաբար բայց ապահովաբար, կը տիրեն, կը հրամայեն իրեն:

Ու կը յիշենք Յուստ Բաշայի՝ իբր թիրք հայրենաօէրի՝ նշանակալից խօսքը, զոր ուղղեց իր վերջին վայրկեաններուն, իր օրհասի սնարը շրջապատող մէկ քանի բարեկամներու: «Խալափութիւնը վտանգ մըն է», ըսաւ մահամերձ զիւանագէտը: Խալափութիւնը վտանգ մըն էր ոչ թէ քրիտոսնեաններուն, այլ իսլամներուն համար: Այդ վտանգը պաշտպանելու, այդ վտանգը մշտնջենաւորելու, վերջապէս այդ վտանգը անվտանգ պահելուն մէջ կը կայանար Խալափութեան ապագան ու թիրքիոյ գոյութիւնը:

Յուստ բաշայի այդ յայտարարութիւնը կը ցուցնէ, թէ ինք որքան խորունկ ու լայն կերպով ըմբռնած էր բոլոր այն պայմաններն ու պահանջները, թիրքիան կանգուն պահելու: Պէտք էր որ թիրքիա օւնենար նաւատորմի մը այնքան ուժով որքան անգլիականը, բանակ մը՝ այնքան հզօրապէս կազմակերպուած ու բազմաթիւ որքան գերմանականն ու ռուսականը եւ զանձարան մը միշտ լեցուն: Պէտք էր որ թիրքիա, յառաջդիմութեան ու լուսաւորութեան ճամբաներուն վրայ էն առաջիններուն հաւատարէր գէթ միշտ: Այսպէս կ'ըմբռնէր Յուստ իր երկրին վիճակը, ու այդպէսով միայն կարելի պիտի ըլլար իսլամութեան վտանգը պահպանել, թիրքիոյ գոյութիւնը ապահովել:

Այօր, օակայն, այնքան զառն փորձառութիւններէ ու դասերէ վերջ, երկիրը՝ իր քաղաքական-բարոյական նշանակութիւնը կորսնցուցած, տնտեսապէս ինկած ու վարկաբեկ, վարչական կազմակերպութիւններով աններդաշնակ ու խախտ, կաշառքի փտախտին մատնուած, իր ինքնօրոյն գոյութիւնը կորսնցնելու սպառնալիքներով շրջապատուած է: Գիտակցութեան արթնցած, դժգոհ ցեղեր, որոնք ճակատագրին խնամոտ մտահոգութիւնը ունեցած չէ երբէք թիրքիա, անոր հիմերը

խախտած են իրենց արդար պահանջներով: Հայկական, Մակեդոնական և Ալպանական խնդիրները, Եւմէնի ու Սանաի մէջ ապստամբական ցոյցեր, սուլթանին առերեսութ սարսափներուն պատճառաւ ամբողջական տարեգրութիւններ ու բանտարկութիւններ, թիրքիոյ խռովալից վիճակը կը մատնանշեն:

* * *

Մակեդոնիոյ ու Ալպանիոյ ապստամբական ու անիշխանական վիճակը կը շարունակէ առաջին տեղը բըռնել զիւանագիտական շրջանակներու մասհոգութիւններուն մէջ և զբաղեցնել ամբողջ եւրոպական մամուլը-արտակարգ ու ձգտուած ուշադրութեամբ: Պօլէն, Սելանիկէն, Աոֆիակն ու վիլննակն հասած լուրերը տագնապալից կացութիւն մը կը նկարագրեն եւրոպական թիրքիոյ մէջ, ուր կ'երեւի թէ քաղաքական փոթորիկ մը կը պատրաստուի: Քրքան ալ Ռուսիա եւ Աւստրիա, տեսակ մը զրուցուած համաձայնութեամբ ու զիւանագիտական միջոցներով, ջանան ուշացնել փոթորիկին պայթումը կամ անոր առաջն ասնել, եւրոպական թիրքիոյ մէջ ստեղծուած կացութիւնը չի կրնար շարունակուիլ, ու մակեդոնական հարցին լուծումը անյետաձգելի ու հրամայողական կը զանայ:

Պուլլար բազմաթիւ հրոսակախումբեր կը գործեն Մակեդոնիոյ ամէն կողմերը, և զարնան գալուստը հաւանական է որ շատցնէ անոնց թիւը: Սելանիկի շրջականները, պուլկար սահմանադիւխն մօտերը, ու Մակեդոնիոյ ուրիշ շատ մը կէտերուն վրայ ընդհարումներ տեղի ունեցած են պուլկար յեղափոխական խումբերու և թիրք զինուորներու միջեւ: «Մօրնիկ Լիտըր»ի Մոֆիաի թղթակիցը հետեւեալը կը հաղորդէ նոյն թերթին:

«Մանրամասնութիւններ հասած են հոս այն արիւնոտ տոռաբի մասին, որ տեղի օւնեցած է Հարաւայի: Մակեդոնիոյ պուլկերն մէկուն՝ Շէշթօփի մէջ: Գիւղը 178 տունէ կը բաղկանայ, ամենքն ա պուլկար:

«Չինուած վեց պուլկարներէ բաղկացած հրոսակախումբ մը, որ շրջականները կը թափտէր, երեկոյեան մօտ Շէշթօփօ զիւղը այցելեց, ուր իրենցմէ մէկուն սիրուհին՝ զաստիարակուհի մը՝ կը բնակէր:

«Գիւղին զէտը նշմարեց իրենց մուտքը և անմիջապէս իմացուց իրենց ներկայութիւնը մօտակայ թիրք հրամանատարին: Երկու հարիւր թիրք զինուորներ, որոնց միջ կային նաև շատ մը պաշտպօզուներ ճամբայ հանուեցան զանոնք ձերբակալելու համար:

«Մութը կոխած էր արդէն երբ պուլկար յեղափոխականները սկսան կրակ ընել թիրք զինուորներուն

վրայ: Երեք պուլկար, և տասնելորո թիւք ուսանանցան:

«Թիւք զինուորները սիսան ըստ բազդին կրակ ընել փողօցներն ի վար, եւ շատ մը պաշը պօզուքներ, համազգեօտ չկրեխուն, սխալմամբ սպաննուեցան ամէկ զինուորներէն:

«Այս տոամին վերջին արարուածը տեղի ունեցաւ գաօտիարակուհիի տանը մէջ: Անիկա իր սիրահարին օգնութեան փութալով հրացան մը ձեռք անցուց, եւ զրան ու պատնէջին ծակերէն կրակ ընել սկսաւ թիւքերուն վրայ, ու վերջապէս ինկաւ գնդակի հարուածներէ ծակծկած:

«Իր սիրահարը՝ չարաչար վիրաւորուած՝ ատրճանակը թիւքերուն վրայ պարպեց, ու վերջին գնդակով մը պայթեցուց իր ուղեղը:

«Այս լուրը այնքան վտանգաւոր յուզում մը յառաջ բերաւ շրջակայքերը որ թիւքերը ազատ արձակեցին իրենց ձեռքակալած զիւղացիները, անոնց յանձնելով զխառուած յեղափոխականներու զուգները՝ թաղելու համար:

Երոպական մամուլին հաղորդուած լուրերէն հետեւեցնելով, յուսահատ կօրներ եւ ընդհարումներ տեղի ունեցած են պուլկար օակմանազուրիւր անցնող հրօսակներու և թիւք զինուորներու միջեւ: Գուրը՝ Մակեդոնիոյ վիճակի մասին ծայրայեղ մտահոգութիւն ցոյց տալով՝ կը զանգատի թէ պուլկար աւագակախումբեր առանց խտրութեան կըօպանեն միտիւման զիւղացիներ, կիներ ու տղաքներ: Պետութիւններուն ուղղած իր մէկ շրջաբերականին մէջ՝ Գուրը կը խնդրէ որ բարեկամական միջամտութիւն մը և ազգեցութիւն մը ի գործ դնեն Պուլկար կառավարութեան մօտ, որպէս զի այս վերջինը ձեռք առնէ հարկ եղած բոլոր միջոցները, առաջը առնելու համար Մակեդոնական Բօմիթէներու զօրձունէութեան և պուլկար լեզափոխականներու յարձակումներուն: Աստրիա եւ Ռուսիա նոյն իմաստ զեկուցուեցին ըրած են Պուլկար կառավարութեան, որ՝ խոտանալով հանդերձ անհրաժեշտ հարկը բոլոր հրօսակախմբերը ցրուելու, պալքանեան թերակղզիի խաղաղութեան համար՝ ինքզինքը անկարող յայտարարած է ճակատագրական շարժումներու առջեւ: Պուլկար կառավարութիւնը միննոյն ատեն շրջաբերական մը զրկած է օտար երկիրներու Պուլկարիոյ զիւանագիտական ներկայացուցիչներուն, զօրաւոր կերպով մատնանշելով թէ՛ Պալքանեան թերակղզիին տեւական խաղաղութեան ու հանդարտութեան համար Պուլկարիոյ առած քայլերն ու ըրած ջանքերը անօգուտ պիտի թան մինչեւ որ ազգու միջոցներ չի գործածուին թիւքերիոյ ներքին զօրձերու վիճակը բարւոքելու համար:

Մակեդոնիոյ տագնապալից վիճակին պատճառաւ, Պուլկար ուստական ղեկան, Պ. Չինովիէֆ, որ արձակուրդով պիտի մեկնէր Պուլկան, յետաձգած է իր մեկնումը: Պ. Չինովիէֆ, սուլթանին հետ իր տեսակցութիւններուն մէջ, կառավարութեան ուշադրութիւնը հըրաւիրած է Մակեդոնիոյ եւ Ալպանիոյ խառնակ վիճակին վրայ, խոստացուած ու չգործադրուած բարեփոքողական անհրաժեշտութեան վրայ պնդած է, ծանրանալով սա կէտին վրայ մանաւանդ թէ կառավարութիւնը երբէք պէտք չէ դէպի պալքանները շարժման մէջ դնէ այնպիսի զինուորներ, որոնք՝ փոխանակ կարգապահութիւն վերահաստատելու, իրաց վիճակը աւելի վատթարացնեն ու կնճստութիւններ ստեղծեն: Պ. Չինովիէֆ այսպէս առաջը առնել ուղղած է այն տրամադրութեան որով Գուրը, ինչպէս կը հաղորդէ «Բօլիթիշէ Բօտեթօքտէնս»՝ հաւանած է կազմելու պաշտպօզուքներու խումբեր, եւ մզելու համար յարձակումները պուլկար հրօսակախմբերուն, որոնք շարունակաբար թիւքերիա կարշաւեն Պուլկարիոյ սահմանազիւն:

Թիւք կառավարութեան համար ցաւալի սխալ մը պիտի ըլլայ, կ'ըսէ նոյն թերթը, ո'ւ է անկանոն զինուոր գործածել, Մակեդոնիոյ մէջ հանդարտութիւնը վերահաստատելու համար, որովհետեւ այդ տեսակ միջոց մը խառնակութիւններու և անմեղ անձերու շարդումին պատճառ պիտի ըլլայ:

Սէլանիկէն հետեւալը կը հաղորդեն «Տէլիֆրօնիքլ»ի.

«Բանտերը լեփ լեցուն են. Սելանիկ—Մօնաստեր երկաթուղիի գծին զանազան ճիւղերուն վրայ երթուակութիւնը գրեթէ զադրած է: Սելանիկի մեծ վաճառատունները ա'լ եւս զադրած են վարկ բանալէ իրենց զիւղի յաճախորդներուն, ինչ որ կը ցուցնէ թէ ընդհանուր անապահովութեան զգացում մը կը տիրէ ամէն կողմ»: Իրազեկ անձեր կը հաստատեն թէ Մակեդոնիա թէեւ պարբերաբար անցած է նեղ ու անհանդարտ վիճակներէ, բայց երկրին ընդհանուր կացութիւնը երբէք այնքան անստոյգ, անապահով ու խռովալից դարձած չէր որքան այսօր:

* * *

Ալպանիա, ուր թիւք գերիշխանութեան օտուերը անգամ մնացած չէ ա'լ, աւելի տագնապալից վիճակ մը կը ներկայացնէ: Կառավարական բազմաթիւ պաշտօնեաներու վրայ յարձակում և սպաննութիւն եղած է: Եւս մը տեղեր կառավարիչներն ու զինուորական հըրամանատարները քաջութիւնը չունին իրենց տուներէն դուրս ելլելու, չեն հասարձակիր նոյն իսկ իրենց տան պատուհաններուն մօտենալ: Թիւք զինուորները՝ երկար ատենէ ի վեր անվճար սնացած՝ չեն կարող, և կամ չեն

յօժարիր, օգնելու տեղական կառավարութեան և յաճախ
ինչպէս վերջերս պատահեցաւ Պիլիպիի մէջ, անոնք կը
մերժեն հնազանդիլ իրենց մեծերուն:

Ալպանացիները՝ թիւ նուաճուած ցեղ մը՝ զիրենք
նուաճողներէն, օթօման թիրքերէն, աւելի առանձնա-
շնորհեալ զիրք մը ունին կայսրութեան մէջ: Թիրք
իշխանութիւնները արհամարհելով, անոնք իրենց ուզա-
ծին պէս կը կառավարեն իրենք զիրենք: Ալպանական
խումբը ամենակարող է Պալատին մէջ, ալպանացիները
զբաւած են կայսրութեան է՛ն բարձր զիրքերէն մէկ
քանին: Սուլթանին անձնապահ գունդը ալպանացիներէ
կազմուած ըլլալով, անոնց կամքն ու խորհուրդները
բացառիկ կշիռ մը ունին: Նոյն իսկ ալպանացի մար-
դասպաններ անպատժութիւն կը վայելեն ամէն տեղ:
Ալպանացի մըն էր որ հրապարակաւ սպաննեց եպարզօս,
Խալիլ Րիֆաթ Բաշաի որդին: Ոճրագործը ձերբակալ-
ուեցաւ, մահուան դատապարտուեցաւ: ու ապա... ազատ
արձակուեցաւ:

Այս անօրինակ առանձնաշնորհումներն ու ազատու-
թիւնները բաւական եղած չեն սակայն ալպանացիները
հանգարտ վիճակի մը մէջ պահելու: Պօլսէն, Պէլկրա-
տէն, Վիեննայէն հասած լուրերը կը հաստատեն, թէ
Ալպանիոյ գանապան քաղաքները, Նօվի-Պազար, Իբէկի,
Տիւրքօվա եւայլն ապստամբական ցոյցեր կը կատարուին
տեղական իշխանութիւններուն դէմ:

Իսկիւպէն կը հեռագրեն թէ Առնապուաններու խում-
բեր եկած հաւաքուած են Նօվի-Պազար, տեղւոյն
Քայմազամէն համար պահանջելու իրենց քաղաքացե-
տին, Հազրը Պէլի, Պօլիս տարագրուելու մասին:

Նոյն տեղէն կը հաղորդեն կրկին թէ Ալպանիացի-
ներ, իրենց պետ Խօսի առաջնորդութեամբ, պաշարած
են Իբէկի կառավարական և հեռագրական պաշտօնա-
տունները, եւ շատերը զերի բռնած են: Միւթէսաբէֆը
և պաշտօնեաները թէեւ յաջողած են փախչիլ, բայց
Ալպանիացիք Մօնաքը զրաւած են: Յետոյ հեռագրած
են Երլարզ Բէօջը պահանջելով որ ազատ արձակուին
բոլոր այն ալպանիացիները, որոնք ալպանացի նրկու
ցեղապետներու միջեւ պատահած կռիւի մը հետեւան-
քով բանտարկուած էին: Շէմսի բաշա, Իսկիւպի զին-
ուորական հրամանատարը հեռագրած է Պօլիս հրահանգ
հարցնելով բանտարկեալներու ազատ թողուելու մասին:

Խոռվալից վիճակ մը կը տիրէ նաեւ Իսկիւտաբէ մէջ,
ուր ալպանիացիք տեսակ մը ինքնավարութիւն կը վա-
յելեն: Տեղացիք՝ իրենց ցեղապետին տակաւին Պօլիս
պահուելուն զէմ բողոքելու համար, բոլոր ձաժբանքը
զոցած, հեռագրական թելերը կտրած և ամէն տեսակ
հաղորդակցութիւն արգիլած են:

Ալպանացիք, առանց խտրութեան կը յարձակին
թիրք ու քրիստոնեայ գիւղերու վրայ ընդհանուր ջար-
դեր սպանալով: Բռէզոնտէն աննուած հեռագրի մը


նայելով, քրիստոնեայ գիւղերը աղերսալիք մը ուղղած
են ուս հիւպատոսին ալպանիացիներուն դէմ պաշտպա-
նութիւն խնդրելով: Ռուսական զեպան Պ. Ջենովիէֆ
և Սերպ կառավարութեան Պալատի ներկայացուցիչը Դրան
ուշադրութիւնը հրաւիրած են Ալպանիա գտնուող քրի-
ստոնեաներու վիճակին վրայ:

* * *

Երբ մէկ կողմէն թիրք կառավարութիւնը զենքի
տակ կը կոչէ «իլավէ»ներն ու «բէաիֆ»ները և գրեթէ
90,000 կանոնաւոր և անկանոն զինուոր շարժման մէջ
կը գնէ Մակեդոնիա և Ալպանիա զրկելու համար,
Աւստրիա, Սերպիա և Մօնթէնէկրօ անտարբեր հան-
դարտութեամբ չէ որ պիտի կրնան զիտել եւրոպական
թիրքիոյ ներկայ տագնապալից վիճակը: «Տէլի Թե-
լէկրաֆ»ի Վիեննայի թղթակիցը կ'ըսէ թէ Աւստրիա
պէտք չունի նոր զինուոր զրկելու սահմանազուխը, ո-
րովհետեւ Ալպանիոյ կամ Պօնիոյ սահմաններուն վրայ
ո՛ր եւ է պատահականութեան զէմ արդի զինուորական
պատրաստութիւնները կը բաւեն արդէն:

Ատենէ մը ի վեր Մօնթէնէկրօ ալ զինուորական
մեծ պատրաստութիւններ տեսնելու վրայ է: Այս մա-
սին «Բօլոնէր Կազէթ» հետեւեալը կը գրէ.

«Մօնթէնէկրօի բանակին մէջ ծառայելու պար-
տաւոր բոլոր այն անձերը, որոնք արտասահման կը
գտնուին, հրաւիրուած են հայրենիք վերադառնալ եւ
անմիջապէս զենքի տակ գալ: Իշխան Նիքօլա այցելած
է վերջերս Փօտկօրիցա, ուր երկար բանակցութիւններ
ունեցած է ալպանիացի քրիստոնեայ ցեղապետներու
հետ, որոնք նախապէս հոն հրաւիրուած են զինքը զի-
մաւորելու համար: Մօնթէնէկրօի զօրագունդները հա-
մախճուած են Ալպանիոյ սահմանազուխը, Կուզէնի
և Փլավիի գաւառներուն մէջ զենք ու մթերք բաշխուած
է զաղտնաբար: Շատ հաւանական է, կ'ըսէ յիշեալ
թերթը, թէ խռովութիւններ ծագածին պէս Քարա-
Տաղի զօրագունդերը անմիջապէս պիտի անցնին Ալ-
պանիոյ սահմանազուխը:»



ԼՈՒՐԵՐ

ԵՒՄԻՆԷՆ կը հաղորդեն թէ հոն ծայր տուած է ապօտամբութիւն մը, որ վերջին աստիճան կը զբաղեցնէ ու մտահոգ կ'ընէ հրամանատար Ալպտուլլահ բաշան:

ԱՏԱՆԱԻ յոյն եկեղեցւոյն մէջ՝ պատարագի ատեն՝ օտար հիւպատոսներու յատկացուելիք տեղի մասին անհամաձայնութեան հետեանքով, շատ ծանր խոսվութիւն մը յառաջ եկած է: Ժողովուրդը կտիւի բռնուած, ու շատեր վիրաւորուած են, ոմանքնոյն իսկ մահացու կերպով:

ՌՈՒՄԻՈՑ ՀԱՅԵՐԸ.—«Բօլիթիշէ ֆօռօրօստէնց» ուղարկութիւն կը հրատարակէ գծազգ վիճակին վրայ, բոլոր այն հայերուն, որոնք 1895-96ի շարժերէն յետոյ Բուսիա ապաստանեցան:

Դեռ շատ չեղաւ, կ'ըսէ յիշեալ թերթը, Քսու կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարեց, թէ բոլոր այն հայերը, որոնք՝ ներկայ տարւոյ մարտ 1ին սուսական հպատակութիւնը ընդունած չեն՝ պիտի արտաքսուին երկրէն:

Թիւրք կառավարութիւնը՝ միւս կողմէն՝ խստիւ արգիլած է հայ փախստականներու Տաճկաստան մուտքը, կասկածելով թէ վերադարձող փախստականներու հետ Թիւրքիա կրնան սպրդիլ, մտնել հայ ազգի ուսու գինուորներ, որոնցմէ մեծապէս կրնայ օգտուիլ Բուսիա՝ պատերազմի ժամանակ:

Եթէ ուսու կառավարութիւնը յամառի արտաքսել ուսու հպատակութիւն չընդունող հայերը ուր, կը հարցնէ յիշեալ թերթը, պիտի կրնան զբօսիլ այդ հայերը:

ԿՐԵՏԷ.—Հոովմէն «Տէլի Նիւզ» կը հաղորդեն, թէ Դեսպաններու յառաջիկայ ժողովին, Կրետէի միջազային կացութիւնը պիտի ըլլայ խնդրոյ նիւթ: Կը կարծուի, թէ վերջ մը պիտի տրուի ներկայ դրութեան, եւ թէ Յունաստանի կատարեալ ազատութիւն պիտի տրուի կղզին իր իրաւաւորութեան տակ առնելու: Մեծ Պետութիւնները այս որոշման յանգած են, կ'ըսուի, ցուցնելու համար Եւրոպայի ղգոհութիւնը՝ Մակեդոնիոյ եւ Ալպանիոյ մէջ Թիւրքիոյ բռնած ընթացքին մասին:

Գ. ՍԱՐԱՅՈՑ՝ Մակեդոնական ֆօմիթէի պետը՝ կը գրէ «Տէլի Թէլէկրաֆ»ի Վիեննայի թղթակիցը, նոր յայտարարութիւն մը ուղղած է Մակեդոնիոյ բոլոր բերստաններուն, հրատարակելով զանոնք համախմբուիլ իր գրօշին շուրջը: Կ'ըսուի թէ երեք տարբեր ծրագրեր ունի Պ. Մարաֆօֆ, զորս՝ եթէ կարելի ըլլայ՝ միաժամանակ գործադրութեան պիտի դնէ: Այս ծրագրերն են, ալպանական ապստամբութիւն մը, Երիտասարդ Թիւրքերու ցոյց մը Պոլիս, և Մակեդոնական ընդհանուր

յեղափոխական շարժում մը:

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԻՐԱՐԱՆՑՈՒՄԸ.—Ձինուորական ինչպէս նաև քաղաքական պաշտօնատարներու բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցած են Պոլիս, կը գրէ «Տէլի Նիւզ»: Աքսորի ու տարեգրութեան դատապարտուածները տանելու համար մասնաւոր նաւ մը ճամբայ ելած է ղէպի կարմիր Մով: Վերջերս ձեռք առնուած անլուր խոտութիւններուն ու տարօրինակ միջոցներուն հետեանքով խորունկ անհանգրատութիւն մը կը տիրէ հոս բոլոր թրքական շրջանակներու մէջ:

ՄԱԿԵԴՈՆԱՑԻ ՅԵՂԱՓՈՒՄԿԱՆՆԵՐԸ.—«Թալէպլաթ» թերթի Սելանիկի թղթակիցը կը հեռագրէ, թէ Մակեդոնացի յեղափոխականներու խումբեր ամբողջ շարժման մէջ են Վիլայէթին ամեն կողմերը: Թիւրք զինուորներէ սպաննուած եօթը մակեդոնացիներու զուլիսներ ցոյցի դրուած են քաղաքին մէջ սարսափ ազդելու համար:

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ՕՐՄԱՆԵԱՆ.—«Թայմզ»ի Պօլսոյ թղթակիցը իր թերթին կը հեռագրէ, թէ Սուլթանը՝ օսմանիէի ականակուս պատուանշանը շնորհելով Հայոց Պատրիարք Օրմանեանին, իր երախտագիտութիւնը յայտնել ուզած է այն ժառանգորեան համար, զոր Օրմանեան յաջողեցաւ կատարել, հոմոզելով Կլուէվա խմբուած հայերը ո՛ր և է թշնամական ցոյց չընել սուլթանի ուժիմին ղէմ:

ԹԻՒՐԿԻՈՑ ԳԱՆՁԱՐԱՆԸ.—«Տէլի Թէլէկրաֆ»ի Պօլսոյ թղթակիցը կը գրէ, թէ Թիւրքիոյ Հանրային պարտուց Վարչութիւնը 40,000 ոսկիի փոխատուութիւն ըրած ըլլալով կառավարութեան՝ Լօրէնսօ-Թիւպիսի ֆրանսական պահանջը վճարելու, հանրային պարտուց Լօնտօնի բաժնեատերերու ժողովը հրահանգ ղրկած է իր Պօլսոյ ներկայացուցչին ո՛ր և է նոր փոխատուութեան համաձայնութիւն չտալ:

ՀԱՍՅԷ

«ՆՈՐ ԿԵԱՆՔ»ի վերաբերեալ նամակ ու բաժնեգրի ղրկել հետեւեալ հասցէին.

REDACTION DU "NOR-GUIANK",
27, BATHURST GARDENS,
KENSAL RISE,
(ENGLAND.) LONDON, N.W.

ՆՈՐ ԿԵԱՆՔը կը հրատարակուի ամէն ամուս 1ին ու 15ին: Բաժնեգրին է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 եւ վեցամսեայ 1 տոլար: